

7-8 (646-647)

15.03.2022

Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Հանաչել գիտաստություն եւ գիտարար, իմանալ զբանս հանձարոյ

# ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

## ԲԱՅԵՐԵՍ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ԴԵՊԻ ՉԱՐԵՆՅՈՒ

Արցախում և, առհասարակ, հայկական տարածքում վերջին երկու տարում տեղի ունեցող իրադարձություններն ինչ-որ տեղ հիշեցնում են Չարենցի «Երկիր Նաիրի»-ի միջավայրն ու ժամանակները: Ուղեորները, որոնք շուրջ մեկ դար առաջ մեզ է հղել մեծ բանաստեղծը, բնավ ժամանակավրեպ չեն, ավելին՝ նորոքյա մտահոգությունների համակցությամբ դրանք խիստ արդիական են ընկալվում:

Չարենցն իրոնիկ հուսահատությամբ է պատկերել նաիրյան երկրի ապագայի մշուշը, մինչդեռ Մազուբի Համոյի երազկոտ աչքերում պատերազմի կրակի լեզվակների պես շարունակում էր բոցկլտալ միացյալ ու անկախ, ծովից ծով Նաիրիի երազանքը: Իրոնյան ու իրականությունը Չարենցի մոտ երբեք հակոտնյա չեն, նա կարողանում էր խորաթափանցորեն Նաիրի երկրի վաղվա օրը տեսնել այսօրվա կերպարանքով: Եվ թեպետ հետագա սերունդներս անընդհատ կարդում ենք նրան, սակայն այդպես էլ չենք կարողանում հասկանալ նրա աստվածատուր մարգարեությունը: Ինչ է թե՛ Եղիշե Աբգարի Սողոմոնյանը սոսկ բանաստեղծ էր, այլ ոչ թե մարգարե: Իսկ ո՞վ է ասել, թե բանաստեղծները մարգարեաբար գուշակելու առանձնաշնորհ չունեն...

Կարսը և Շուշին. այս երկու հայկական բերդաքաղաքների ճակատագրերի մեջ նմանություն տեսնո՞ւմ եք: «Երկիր Նաիրի»-ին վերընթերցելու անհրաժեշտություն կա, ուրեմն՝ վերընթերցենք և անպայման կտեսնենք մեր օրերի ֆելդեր բիբլիսի Արշակին, որը ծառայից վերածվել էր բուժակի, հաշտարար դատավոր Օսեփ Նարիմանովին, որը զարմանալիորեն սիրված էր բոլորի կողմից, գեներալ Ալոշին, որը քաղաքի ամենահարուստ մարդն էր, պատեհապաշտ Քոռ Արուսիկն ու Մեռելի Ենոքին, որը հեռատեսորեն «լիկվիդացիայի էր ենթարկել դազադագործությունը»...

Շուշիի Ղազանչեցոց սուրբ ամենափրկիչ եկեղեցու անարգման ֆոնին մի՞թե այժմեական չէ տեր Հուսիկ քահանայի կերպարը: Հիմա Առաքելոց վանքն ու Ղազանչեցոց եկեղեցին Աստուծո որբերի նույն շարքում են, միաթարվենք երկնային տիրոջ անսահման բարեգթությամբ և ապավինենք Չարենցի իմաստախոսությանը, նրա միջոցով զգանք ժամանակի շունչը: Մեր ու չարենցյան ժամանակն այնքա՞ն նման են իրար:

Հա, չմոռանանք նաև, որ նա ասել է ամենակարևորը՝ հայ ժողովրդի փրկությունը նրա միասնության մեջ է: Եվ սա լոզունգ չէ, պլակատային խոսք չէ, սա ապագայի անփոփոխ պատգամն է, որ պարտավոր ենք կենսակերպ դարձնել ու դրոշ: Պարտավոր ենք մեր միջից անպայման վանել մազուբիհամոներին, գեներալալոշներին, օտարախոս հաջիներին... Այդկերպ միայն կարող ենք վերադարձնել Կարսն ու Շուշին: Այդկերպ կարող ենք միայն բացդրես վերադառնալ դեպի Չարենցը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

Եղիշե ՉԱՐԵՆՑ-125

## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՈԱԴԻՈ



Նորի՞ց զրնգում է հոգիս, Դղրդում է անսամձ ահով: Ձգում եմ՝ կուտակվում է նորից Փոթորիկը կյանքի ու մահու:

Նորից - Աշխարհի բոլոր կողմերում - Դեպի հյուսիս, արևմուտք, արևելք - Ահաձայն զրնգում է մի երգ Ու թռչում է - հեռու:

Նվագվում է նորից Բյուրավոր սրտերի վրա Մի անդարձ պարտության կսկիծ... Բայց վառվում է նոր մի քուրա: Բոցկլտում է միլիոն աչքերում, Սրտերում արևտեղ ռու վառ, Երկաթե, բրոնզե կրծքերում, Կրծքերում - կարմիր մարմար: Սրտից-սիրտ թռչում է մի ճիչ Օրերում այս ահեղ ու խենթ - Հեծկլտում է հիվանդ մի քրքիջ, Ձառանցում է մի տենդ:

Իսկ նրանց աշխարհում ավեր, Ինչպես մի ուղեղում հիվանդ, Սնուցվում են արնոտ դավեր, Արյունի կարոտ ու խանդ: Լոնդոնից, Փարիզից, Պեկինից Մինչև Պո, ու Բեռլին, ու Լիոն -

Ձառանցում է Նյու-Յորքը նորից Ու տենդում է դեղին Տոկիոն...

Ու նրանց դաժան երազում Թնդանոթը ճչում է բուք, Գնդացիքը արյուն է հազում Ու տանկերը սեղմում են անգուր: Ու կապույտ ծովերի վրա Ջրահապատ նավերը մեծ Նորի՞ց հորանցում են հիմա Արյունառուշտ ծանծուրդից իրենց. Բացել են բերանները լեն, Ու նրանց դեղին որկորից Մռնչում է մահն իրեղեն - Նորից...

Իսկ մե՞նք, որ ելել ենք կռվի, Մարտնչել ենք դարե՛ր ու դարե՛ր, Հարբել ենք երազով հեռվի, Երազել ենք - կարմիր արև: Երազել ենք հզոր աշխատանք - Միլիոնի, բյուրի, բոլորի,- Խնդություն՝ աշխարհից-աշխարհի, Խենթություն՝ անմար իրի...

Մենք, որ բյուր երազներ ենք սնել Օրերի աքսորում, բանտում, Օրերում դժվար ու անել,- Մերկ, հոգնաբեկ, անտուն: Մաշել ենք մկանները մեր, Ձեռքերով մեր պողպատ ու քար Փոքրիկել ենք միլիոն հանքեր - Դարերում անսահմա՞ն երկար... Որ եղել ենք հին Աթենքում, Կանգնեցրել ենք Մեմֆիսն ու Թեբեն, Դարերից անցել ենք անքուն Ու հարթել ենք կյանքի ճամփեն:- Ու հազար դարերի տենդում Մեզ ծախել են նրանք ոսկով - Բայց հիմա եկել ենք - խնդուն, Ու հասել ենք հիմա - Մոսկով: Ծփծփում են հիմա հողմավար Բանակները մեր բյուր, Շառաչում են վարար, Լեռնանում են, շաչում ամենուր: Ձգվում են մկան առ մկան,

Ցանցում են աշխարհը հին,- Կեցե՛լ ենք հզոր, հաղթական, Սպասում ենք - վերջի՞ն կռվին:

Ասում ենք.- Ծառացե՛ք հիմա, Եկե՛ք, ինչքան կաք կյանքում, Սպասում ենք ձեզ - անահ, Սպասում ենք - անքուն: Երազում ենք բանակները ձեր սև, Որ պիտի հորդեն նորից, Որ քանդեն մեր ուղին լուսե, Լուսավոր ուղին բոլորի: Եկե՛ք, ինչքան կաք: Եկե՛ք: Մեր կրծքերը պողպատ են ու քար: Այս օրվա սպասել ենք մենք Դարերում - անսահմա՞ն երկար... Եկե՛ք, հեղեղե՛ք, հորդե՛ք, Ծփացե՛ք ոհմակ առ ոհմակ, Հյուսիսից մինչև արևելք Տարածե՛ք ավերում ու մահ: Ոսկեղեն արևի ներքո Թող շողան ոսկի սվիններ,- Եկե՛ք, դարերի խորքից Անընդհատ արշավող հոներ: Դուք, որ միշտ մեր քրտինքն էք կերել Ու հարբել քրտինքով մեր տոթ,- Եկե՛ք, թե կուզեք չլինել Մեր վերջին կռվից հետո...

Մենք ասում ենք.- Կանք, կլինենք, Աշխարհում ինչքան կա դեռ արև, Ինչքան կա աշխատանք ու երգ, Մկաններ - պողպատե, քարե: Եկե՛ք Փարիզից, Լոնդոնից, Նյու Յորքից, Բեռլինից-Եկե՛ք. Սպասում ենք նորից,- նորից Մեր ճակատը հպա՛րտ է ու սեզ: Սպասում ենք կռվին վերջին եվ գիտենք - վերջին կռվում Ձեր հետքերը պիտի կորչին Մեր երթի լուսավոր հեռվում:- Եվ ձեր խեղճ դիերի վրա Մեր քրտինքը գուլալ, սրբազան - Կվառե խնդության մի քուրա, Կկապե պայծա՞ր ծիածան...

## ՈԱԶՄԱԿԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՍՏԵՂՈՒՄԸ ՎԵՐՉԱՊԵՍ ԸՆԹԱՅՔ Է ՍՏԱՆՈՒՄ



Արցախում ռազմական ամբիոն ունենալու անհրաժեշտության մասին վաղուց է խոսվում՝ 2001 թվականից սկսած: Այդ նպատակով տարբեր տարիներին համապատասխան գերատեսչությունների կողմից նախագծեր են ներկայացվել ԱՀ կառավարության, սակայն ինչ-ինչ պատճառներով չի ընթացքավորվել: ԱՀ ԿԳՄՍՆ-ի կողմից ամռանը վերջին նախագիծն է ներկայացվել ԱՀ Ազգային ժողով «Բարձրագույն կրթության մասին» ԱՀ օրենքում լրացում կատարելու մասին, ըստ որի՝ բուհում ամբիոն բացելու իրավունք ունի նաև լիազոր մարմինը, այսինքն՝ ԱՀ կառավարությունը (այդ իրավունքը տրված է միայն բուհի ղեկավարին): Այդ մասին «Լուսարար»-ը հոդված է հրատարակել «Ռազմական ամբիոնի ստեղծումը երկու տաս-

նամյակ է՝ օրակարգում է» վերնագրով (*տես՝ «Լուսարար»* հ.31-32, 2021թ.):

Վերջապես այս խնդրի իրավական լուծումը կարծես ընթացք է ստանում: Մարտի 4-ին կայացել է ԱՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նիստը, որի օրակարգում ընդգրկված էր «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի քննարկման հարցը:

Օրենքների նախագծերի փաթեթը ներկայացրել է ԱՀ ԿԳՄՍ նախարար Ա. Հակոբյանը:

Փաթեթով առաջարկվում է պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում հիմնել ռազմական ամբիոններ: Վերջիններիս գործունեությունը միտված կլինի ուսանողակենտրոն միջավայրի, ռազմական կրթության մրցունակության ապահովմանը, ինչպես նաև ռազմական պատրաստության ծրագրերով պահեստազորի սպաների պատրաստմանն ու երիտասարդների ռազմահայրենասիրական և ռազմամասնագիտական կողմնորոշման իրագործմանը:

Նախագծի վերաբերյալ պատգամավորների հարցադրումներին նախարարը տվել է պարզաբանումներ:

Նախագծերի փաթեթը միաձայն դրական եզրակացությամբ ներկայացվելու է առաջիկա ԱԺ հերթական նիստի քննարկմանը:

ԳՆԱՀԱՏԱՆԸ

ԱՇ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐԸ ՉՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ԳԵՎՈՐԳ ՍՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Արցախի պետական կամերային նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր, արցախցիների սիրելի Մատեստրոն դարձավ 75 տարեկան:

ԱՇ ԿԳՄՍ նախարար Անահիտ Չակոբյանը մարտի 2-ին ընդունել է հոբելյարին: Շնորհավորելով նրան ծննդյան 75-ամյակի կապակցությամբ՝ նախարարը մաղթեց նրան քաջառողջություն և անսպառ եռանդ իր առաքելության ճանապարհին:

18 տարի առաջ ազդարարվեց Արցախի պետական կամերային նվագախմբի ծնունդը, որի կայացման մեջ մեծ է Գևորգ Մուրադյանի դերը: Անգնահատելի է նրա մերթուռումը հատկապես մատաղ սերունդի մեջ դասական երաժշտարվեստի հանդեպ սեր սերմանելու, դասական արժեքները յուրովի բացահայտելու ունակություններ ձևավորելու և, ընդհանրապես, դասականը հանրահռչակելու գործում, իսկ հասարակության ընդգծված սերն ու հարգանքը երգչախմբի և խմբավարի հիասքանչ արվեստի, նրա Մարդ տեսակի հանդեպ վկայում են այս անցած տարիների բեղմնավոր աշխատանքի մասին:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Լեռնիկ Չովհաննիսյանի խոսքով՝ Արցախում դասական երաժշտարվեստը Գ. Մուրադյանի տաղանդի շնորհիվ մեր շունչ առավ, և Մատեստրոն կարողացավ սիմֆոնիկ դասական երաժշտությունը հասանելի դարձնել հանրությանը:

ԱՇ ԿԳՄՍ նախարարի խորհրդա-

կան Մելանյա Բալայանը Գ. Մուրադյանին նվիրեց Վահրամ Բալայանի «Շուշի. տեղն ու դերը հայոց կրթական համակարգում» գիրքը: Մ. Բալայանի խոսքով՝ Մատեստրոն իր գործունեությամբ այսուհետ կգարողարի նաև հայոց բերդաքաղաք Շուշիի բազմահարուստ պատմության էջերը:

սիրված ու սպասված են դասական երաժշտության սիրահարների համար: Հարկ է նշել, որ դասական երաժշտության քարոզման ու տարածման առումով, նաև այն սիրող ու գնահատող հանդիսատես դաստիարակելու առումով շատ մեծ է նվագախմբի դերը: Տարիներ շարունակ հայ և համաշխարհային

երաժշտության ուղին շատ ուշ է ընտրել՝ այն տարիքում, երբ այդ աշխարհի ոտք դրած իր տարեկիցներն արդեն դպրոց և ուսումնարան են ավարտում: Ընտրությունն էլ բուրովիկն պատահաբար եղավ, երբ հարևանությամբ ապրող երաժիշտ ընկերոջ տանը միանգամից կախարդվեց Բեթհովենի երաժշտությամբ: Ռոմանոս Մելիքյանի անվան ուսումնարանն ավարտելուց հետո ընդունվեց Երևանի պետական կոնսերվատորիայի օպերային և սիմֆոնիկ դիրիժորության բաժին: 1973-1990թթ.՝ Հայաստանի հեռուստառադիոյի սիմֆոնիկ նվագախմբի դիրիժորն էր: Առաջին մեծ հաջողությունը 1983-ին էր, երբ Մոսկվայում կայացած դիրիժորների համամիութենական 5-րդ մրցույթի մրցանակակիր դարձավ, ինչն էլ նպաստեց հրավեր ստանալ՝ կատարելագործվելու Վիննայի երաժշտական ակադեմիայի ասպիրանտուրայում՝ 1986-1987թթ.: Եթե գործունեության ասպարեզը միայն դասական երաժշտությունն էր, ապա աշխատանքային հասցեները տարբեր էին՝ Երևանի սիմֆոնիկ նվագախմբի դիրիժոր, Ֆիլիպսոնիկ երգչախմբի ղեկավար և դիրիժոր, Սուրբ Գևորգ եկեղեցու և Մայր Տաճար Սուրբ Էջմիածնի եկեղեցական երգչախմբեր, Երևանի կոնսերվատորիայի օպերային պատրաստման ամբիոնի դոցենտ: Իսկ 2004-ին, աշխատանքի հրավեր ունենալով արտասահմանից և Արցախից, նա ընտրեց վերջինը: Արդեն ճանաչում և համ-

բավ ունեցող դիրիժորը թողեց ամեն ինչ և տեղափոխվեց Արցախ՝ այստեղ ամեն ինչ նորից սկսելու, իր ժողովրդի այս հատվածին նվիրվելու և սիրվելու: Հանրապետության իշխանությունները, բարձր գնահատելով նրա ներդրումը մեր մշակութային կյանքում, ծննդյան 70-ամյակի կապակցությամբ շնորհեցին ժողովրդական արտիստի կոչում:

Հոբելյանի առթիվ «Լուսարար»-ին տված հարցազրույցում Մատեստրոն ասել է. «Երբ ինձ շնորհվեց ժողովրդական արտիստի կոչում, մի պահ հուզվեցի՝ վերապրելով իմ ստեղծագործական ուղին ուսանողական տարիներից, եկել-հասել եմ, արժանացել եմ այդ վերաբերմունքին, այդ պատկառանքին, այդ սիրուն: Այս տարիքում ես չեմ ամաչում, որ արդեն ժողովրդական եմ, որովհետև կոչումնամուրթայամբ չեմ տառապում, երբեք կոչումների հետևից չեմ ընկել: Ես շատ երախտապարտ եմ. ժողովրդական արտիստն այն է, որ շորի, հանդերձանքի պես պիտի հագնես, իմանաս, որ վրայովդ է: Կոչումը ռուսերենում իմաստային նրբություն ունի՝ звание и призвание, կոչված պիտի լինես քո գործի համար, թե չէ՝ ուզում են հազար կոչում տան թղթի վրա, ոչ մի օգուտ: Կոչումը չտային էլ, ես գիտեմ, որ ժողովուրդը ինձ սիրում է, ես դա զգում եմ փողոցով քայլելիս, մարդկանց հետ շփվելիս»:

«ԼՈՒՍԱՐԱՐ»



վերջում Գ. Մուրադյանն իր երախտագիտությունը հայտնեց նախարարին ու ներկաներին՝ նշելով, որ իր հաջողության գաղտնիքը ապագային վստահ մայելու մեջ է, և որ համատեղ ջանքերով, անշուշտ, կարող ենք հասնել նորանոր ձեռքբերումների և հաջողությունների:

Գևորգ Մուրադյանն Արցախ եկավ 2004-ին, և արդեն 18 տարի է՝ մեր հանրապետության մշակութային կյանքում իր ուրույն տեղն է զբաղեցնում նրա ղեկավարած նվագախումբը, որի համերգները

երաժշտարվեստի գոհարները բարձր պրոֆեսիոնալիզմով ներկայացնելով հանդիսատեսին՝ նվագախմբի ղեկավարը նաև Արցախ է բերում միջազգային ճանաչում ունեցող երաժիշտ կատարողների, անվանի երգիչների և կոմպոզիտորների: Բարեկիրթ, բարյացակամ, մարդամոտ ու բարեհամբույր Մատեստրոն քաղաքի կողորհտուն իր ճանաչելի գույնն ունի՝ մայրաքաղաքի դիմագծին այնքան մերդաշնակ ու նրանից անբաժանելի: Ծնվել է 1947թ. Երևանում:

ԵՎՐԱՏՈՐԻՆԵՐԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱՂՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՉՆՉԱՅՈՒՄԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՂ ԲԱՆԱԶԵՎ

«Լեռնային Դարաբաղում մշակութային ժառանգության ոչնչացման մասին» բանաձևի քվեարկությանը մասնակցել է 679 պատգամավոր, որից 635-ը կողմ է արտահայտվել բանաձևի ընդունմանը, 2 պատգամավոր դեմ է եղել, 42-ը՝ ձեռնպահ:

Բանաձևով Եվրամիության օրենսդիր մարմինը խորը մտահոգություն է արտահայտում Արցախի տարածած պատմության առնչությամբ, որտեղ հայկական մշակութային ժառանգության վայրերը ներկայացվում են որպես ալբանական ծագում ունեցող, իսկ հայկական հուշարձանները վերանվանվում են «կոլկասյան-ալբանական»:

Այն խստորեն դատապարտում է Արցախի շարունակական քաղաքականությունը՝ ջնջելու և ժխտելու հայկական մշակութային ժառանգությունը Լեռնային Դարաբաղում և դրա շուրջը՝ խախտելով միջազգային իրավունքը և Արցախի միջազգային դատարանի վերջին որոշումը:

Արցախում աշխատանքային մարմինները, որի առջև առաջադրանք է դրված «ջնջել կեղծ գրությունները» Լեռնային Դարաբաղի՝ նրա վերահսկողության տակ գտնվող կրոնական կամ պատմական հուշարձաններից, դատապարտվում է որպես հարևան ժողովուրդների մշակութային ժառանգության անիրավաչափ թալան՝ նրանց պատմական հիշողությունից զրկելու նպատակով: «Այս որոշումը խախտում է Միջազգային դատարանի 2021թ. դեկտեմբերի 7-ի վճիռների ոգին», - նշվում է փաստաթղթում:

Փաստաթուղթը փաստում է, որ վերջին երեսուր տարիների ընթացքում Արցախի կողմից իրականացվել է կրոնական և մշակութային ժառանգության անդառնալի ոչնչացում, հատկապես՝ Նախիջևանի Իմրեմվար Հանրապետությունում, որտեղ ավերվել են 89 հայկական եկեղեցի, 20 000 գերեզմաններ և ավելի քան 5 000 տապանաքարեր:

Բացի այդ, բանաձևը Արցախից պահանջում է համապատասխան կառույցներին, ինչպիսիք են ՅՈՒՆԵՍԿՕ-ն, Ալօր-ը կամ

Iconem-ը, հասանելիություն տրամադրել նրա վերահսկողության տակ գտնվող տարածքներում ժառանգության օբյեկտներին, որպեսզի կարողանան սկսել դրանց գույքագրումը եւ ապահովել պաշտպանությունը: Նա նաև վճռակաճորեն կոչ է անում մինչ ՅՈՒՆԵՍԿՕ-ի գնահատման առաքելությունը չմիջամտել հայկական ժառանգության օբյեկտներին եւ խորհրդակցություններ անցկացնել մշակութային ժառանգության հայ եւ միջազգային փորձագետների հետ՝ հայկական մշակութային ժառանգության օբյեկտներում միջամտությունից առաջ եւ դրա ընթացքում:

Եվրոպացի օրենսդիրները նաև ընդգծում են, որ հայկական մշակութային ժառանգության հետքերի վերացումը Լեռնային Դարաբաղում իրականացվում է ոչ միայն այն վնասելու կամ ավերելու, բայց նաև պատմության կեղծման և այն որպես, այսպես կոչված, կոլկասյան-ալբանական ներկայացվելու միջոցով, և արձանագրում, որ 2022 թվականի փետրվարի 3-ին Արցախի մշակութային նախարար Անար Քարինովը հայտարարել է «հայերի կողմից ալբանական կրոնական տաճարների վրա գրված հորինված հետքերը» վերացնելու համար պատասխանատու աշխատանքային խումբ ստեղծելու մասին:

Փաստաթուղթը նաև փաստում է, որ հայկական մշակութային ժառանգության վերացումը հանդիսանում է հայտարարության, պատմական ռեկոնստրուկցիայի և հայերի նկատմամբ ստեղծված քաղաքականության ավելի լայն օրինաչափության մի մասը, որը խրախուսվում է Արցախի իշխանությունների կողմից, ներառյալ հակահումանիզմը, բռնության փառաբանումն ու տարածքային պահանջները Հայաստանի Հանրապետության նկատմամբ, որոնք սպառնում են խաղաղությանն ու անվտանգությանը Հարավային Կովկասում:

Նաև ընդգծվում է պատմամշակութային ժառանգության պաշտպանությանը Հայաստանի և Արցախի միջև հակամարտության կարգավորման և Լեռնային Դարաբաղի կարգավի-

ճակի վերջնական սահմանման ավելի լայն իմաստով մոտենալու անհրաժեշտությունը, և այս համատեքստում կոչ է արվում Արցախում իրաժարվել իր մաքսիմալիստական նպատակներից, ռազմատենչ մոտեցումներից և Հայաստանի նկատմամբ տարածքային պահանջներից ու բարեխղճորեն ներգրավվել ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո Լեռնային Դարաբաղի վերջնական կարգավիճակի վերաբերյալ բանակցություններին:

Փաստաթղթի հեղինակները նաև կոչ են անում Արցախում ամբողջությամբ կատարել Արցախի միջազգային դատարանի միջանկյալ կարգադրությունը, մասնավորապես՝ «ձեռնպահ մնալ հայոց լեզուն ճնշելուց, հայկական մշակութային ժառանգությունը ոչնչացնելուց կամ այլ կերպ՝ պատմական հայկական մշակութային ներկայությունը վերացնելուց, կամ հայերի մուտքն այդ վայրեր և դրանցից օգտվելը արգելելուց» և «վերականգնել կամ վերադարձնել հայկական մշակութային և կրոնական որևէ շինություն և վայր, արտեֆակտ կամ առարկա», շեշտում է, որ մշակութային ժառանգության ոչնչացման կամ փոփոխման ցանկացած մարդկային կամ անհասկալի ուղարկության արժանանա միջազգային հանրության կողմից:

Բանաձևը նաև կոչ է անում Եվրահանձնաժողովին (ԵՄ գործադիր մարմնին) օգտագործել բոլոր հասանելի լծակները Լեռնային Դարաբաղում մշակութային ժառանգության ոչնչացման, փոփոխման, ինչպես նաև՝ վանդալիզմի դեպքերը կանխելու համար:

Փաստաթղթում նաև մտահոգություն է հայտնվում հայ-արցախյան սահմանին վերսկսված բախումների կապակցությամբ, որոնք հանգեցրել են մարդկային զոհերի, եւ կողմերին կոչ է արվում զերծ մնալ ուժի կիրառումից եւ շարունակել վերջերս սկսված քաղաքական երկխոսությունը:

Բանաձևի քննարկման ժամանակ ելույթ ունեցած պատգամավորների ճնշող մեծամասնությունը սուր քննադատության է ենթարկել Արցախի կողմից իր վերահսկողության

տակ անցած տարածքներում հայկական մշակութային ժառանգությունը ոչնչացնելու փորձերը, հատկապես շեշտվել, որ այդ տարածքներում հարյուրավոր հայկական վանքեր, եկեղեցիներ, հազարավոր խաչքարեր ու տապանաքարեր կան, որոնք Բաքվի քաղաքականության պատճառով սպառնալիքի տակ են գտնվում:

Եվրոպական խորհրդարանի մի քանի պատգամավորներ Բաքվի գործողությունները համեմատել են Թալիբանի կողմից Աֆղանստանում, Սիրիայի եւ Իրաքի տարածքում իսլամական պետության կողմից մշակութային եւ պատմական կոթողների ոչնչացման հետ, հիշեցրել, թե ինչպես է Արցախում տարիների ընթացքում հիմնովին ոչնչացրել հայկական մեծաքանակ եկեղեցիները, խաչքարերն ու գերեզմանոցները, որոնք եղել են Նախիջևանում:

«ԱՇ ԿԳՄՍ նախարարության անդրադարձը Եվրախորհրդարանի ընդունած բանաձևին

Մարտի 10-ին Եվրոպական միության խորհրդարանը ծայրերի 635 կողմ, 2 դեմ և 42 ձեռնպահ հարաբերակցությամբ ընդունել է «Լեռնային Դարաբաղում մշակութային ժառանգության ոչնչացման մասին» բանաձևը: ԱՇ ԿԳՄՍ նախարարությունն այդ բանաձևը համարում է միջազգային մարդասիրական իրավունքի ցայտուն օրինակ:

Բարձր ենք գնահատում Եվրախորհրդարանի յուրաքանչյուր պատգամավորի՝ հայկական պատմամշակութային ժառանգության նկատմամբ Արցախի օկուպացված տարածքներում Արցախի կողմից իրականացվող վանդալիզմը դատապարտող ելույթն ու կարծիքը:

Հուսով ենք, որ մեծ փաստաթղթեր կընդունեն նաև այլ միջազգային կազմակերպություններ, ինչը դրական ազդեցություն կունենա Արցախի օկուպացված տարածքներում Արցախի կողմից իրականացվող մշակութային ցեղասպանության ընթացքի կասեցման վրա:

ՈՒՂԵՑՈՒՅՑ

4-րդ դասարանի գիտելիքների ստուգույս  
ՄԱՅՐԵՆԻ

I. Թեստի կառուցվածքը և առաջադրանքների գնահատման չափանիշները

Թեստը պարունակում է 15 առաջադրանք և բաղկացած է 2 մասից:

1-ին մասը պարունակում է որևէ տեքստ՝ գեղարվեստական կամ գիտահամարամտալի և 7 առաջադրանք՝ տեքստի բովանդակության վերաբերյալ: Առաջադրանքներից մեկը ընտրովի է, իսկ մնացածին պետք է պատասխանել բառով կամ նախադասությամբ: Այդ առաջադրանքներով ստուգվում են ընթերցանության զանազան ունակություններ՝ ուշադրություն, հետևություններ ու եզրակացություններ անելու կարողություն, տեքստը վերլուծելու, գնահատելու և արժևոյնով հմտություններ: Տեքստերի ծավալները կախված են դրանց տեսակից. գեղարվեստական բովանդակությամբ տեքստերը պարունակում են շուրջ 350 բառ, գիտահամարամտալիները՝ շուրջ 250 բառ:

2-րդ մասը պարունակում է 8 առաջադրանք (8-15-րդը), որոնցով ստուգվում են՝

- բառի կազմության ճանաչում՝ պարզ, բարդ (հոդակապով, անհոդակապ), ածանցավոր (նախածանցավոր, վերջածանցավոր),
- բառի իմաստի իմացություն, հոմանիշների և հակառակի ճանաչում, բառի փոխարեքական իմաստով գործածություն, դարձվածքների ճանաչում,
- ուղղագրական դժվարություն ունեցող բառում բաց թողած տառի տեղադրում,
- գոյականի, դրա թվի և տեսակների՝ հատուկ, հասարակ, ածականի, թվականի, շղկապի ճանաչում,
- նախադասության անդամների ճանաչում՝ ենթակա, ստորոգյալ, կոչական, լրացումներին տրվող հարցերի իմացություն:

II. Գրավոր աշխատանքի գնահատման չափանիշներ

Յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր: Թեստի առավելագույն միավորն է 15-ը: Ամփոփիչ վերջնական գնահատականը որոշվում է թեստի առաջադրանքներից սովորողի վաստակած բոլոր միավորների գումարից, որը համապատասխանեցվում է 10 բալանոց համակարգին:

Միավորը	Գնահատականը	Միավորը	Գնահատականը
0-1	1	8-9	6
2	2	10-11	7
3	3	12-13	8
4-5	4	14	9
6-7	5	15	10

III. Աշխատանքի համար հատկացվող ժամանակ

Քննական աշխատանքի կատարման համար հատկացվում է 60 րոպե:

Թեստի նմուշ

1-7-րդ առաջադրանքները կատարել ըստ տեքստի

Բարուրի մեջ ամուր փաթաթված մանկիկը թեև կուշտ էր, բայց ոչ մի կերպ չէր հանդարտվում: Մի ծայրի ծշում էր, անհանգիստ շարժումներ անում: Մոր փաղաքուշ հորդորները, խոսքերը, օրորոցայինը չէին օգնում: Ծնողները չէին հասկանում փոքրիկի աղիողորմ լացի պատճառը: Գուցե բարո՞ւրը բացեն: Արձակեցին կապանքները, և նույն րոպեին երեխան լռեց ու խաղաղ փակեց աչքերը: Մայրը հասկացավ. նրան կաշկանդել չէր կարելի:

Այդ ընթացքում մանկիկը Լյուդվիգ վան Բեթհովենն էր՝ ապագա հանճարեղ կոմպոզիտորը: Անուրախ մանկություն է ունեցել մանչուկը: Հայրը սիրում էր ոգելից խմիչքներ: Նա երազում էր որդուն դարձնել մի նոր Մոցարտ: Յոթ տարեկան Լյուդվիգը, որ երբեմն ուզում էր վազվզել բակում, պահմտոցի, գնդակ խաղալ, հոր պահանջով գամված էր դաշնամուրին: Հայրը տեսնում էր տղայի բացառիկ ընդունակությունները և արգելում բացի երաժշտությունից որևէ այլ բանով զբաղվել:

Տասնմեկ տարեկան հասակում Բեթհովենն արդեն աշխատում էր եկեղեցում որպես երգեհոնահար, իսկ տասնչորս տարեկանում մասնավոր դասեր էր տալիս ազնվական ընտանիքների երեխաներին:

Շուտով Բեթհովենն այնքան է հռչակվում, որ շատ ազնվական տներից հրավերներ է ստանում՝ դառնալու սալոնային երաժիշտ: Բայց ընթացքում ոգով ու անկախ բնավորությամբ Բեթհովենը հրաժարվում է՝ նախընտրելով մնալ աղքատ, բայց չապրել որևէ մեկի հրամանի ներքո, չկատարել պատվերներ:

Քսանյոթ տարեկանում Բեթհովենին մեծ դժբախտություն է պատահում. նա սկսում է խլանալ: Սակայն մեծ կոմպոզիտորն օժտված էր բացառիկ կամքով... «Ես կբռնեմ ճակատագրի կոկորդիս, և նա չի կարող ինձ լիովին տապալել»,- գրում էր բարեկամներին,- հաղթանակ՝ պայքարի միջոցով»:

...Խլությունը խորանում է: Բեթհովենի համար գնալով դժվարանում է մարդկանց հետ շփվելը, և միայն բնության գրկում է նրա հոգին լցվում երաժշտությամբ, ինչպես մանկության օրերին էր:

1-4 -րդ առաջադրանքներում գրել պատասխանը

1. Ի՞նչ են մտածում անել ծնողները բարուրի մեջ փաթաթված մանկիկին հանդարտեցնելու համար:

Պատասխան՝ \_\_\_\_\_:

2. Ո՞վ էր այդ ընթացքում մանկիկը:

Պատասխան՝ \_\_\_\_\_:

3. Ինչպիսի՞ մանկություն է ունեցել նա:

Պատասխան՝ \_\_\_\_\_:

4. Ի՞նչ էր երազում Բեթհովենի հայրը:

Պատասխան՝ \_\_\_\_\_:

5. Ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ.

Տասնմեկ տարեկանում որտե՞ղ էր աշխատում պատանի երաժիշտը:

- Մասնավոր դասեր էր տալիս ազնվական ընտանիքների երեխաներին:
- Նա չէր աշխատում, տանը գամված էր միայն դաշնամուրին:
- Ազնվական տներում աշխատում էր որպես սալոնային երաժիշտ:
- Եկեղեցում աշխատում էր որպես երգեհոնահար:

6-րդ, 7-րդ առաջադրանքներում գրել պատասխանը

6. Քսանյոթ տարեկանում ի՞նչ դժբախտություն է պատահում Բեթհովենին:

Պատասխան՝ \_\_\_\_\_:

7. Մեծ դժբախտությունից հետո ինչպե՞ս էր Բեթհովենը լցվում երաժշտությամբ:

Պատասխան՝ \_\_\_\_\_:

8-րդ, 9-րդ առաջադրանքներում լրացնել աղյուսակը

8.

բառ	պարմատ	անոց
ընթացք		

9. Խմբավորել բառերը ծոր, անդնդախոր, թույլ, շառաչյուն, փոքրիկ, սարալանջ, գետակ, ծյուն, լայնատերև

պարզ	ածանցավոր

10. Համապատասխանեցնել

Բառ	Հակամիջ
1) անկեղծ	Ա) գորշ
2) մաքուր	Բ) որոտ
3) աղմուկ	Գ) անդորր
	Դ) ազնիվ
	Ե) աղտոտ
	Զ) խարդախ

Պատասխան՝ 1-\_\_\_\_, 2-\_\_\_\_, 3 -\_\_\_\_

11-13-րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանը կարող է ունենալ մեկ կամ մի քանի տարբերակ

11. Ո՞ր բառակապակցության մեջ է ածականը գործածված փոխաբերական իմաստով:

- դալար կանաչ
- լայնարձակ հովիտ
- երփներանգ ծաղիկներ
- անուշահոտ ջերմություն

12. Ո՞ր բառակապակցություններն են դարձվածքներ:

- ականջները սրել, 2) ուրիշին խաբել, 3) լեզուն կծել, 4) ճաշը համտեսել, 5) սիրտ անել, 6) աչքերը հառել, 7) զլուխ պահել

13. Ո՞ր բառերում է գրվում -դ-:

- ծնուն..., 2) բր...ոտ, 3) դա...ար, 4) փար...ամ, 5) սրըն...աց, 6) զար...

14. Գրել պատասխանը.

Ո՞րն է տրված նախադասության ենթական:

Ձյունը ծվարել էր ուղղաձիգ լեռնագագաթների ծերպերին:

Պատասխան՝ \_\_\_\_\_

15. Լրացնել աղյուսակը.

Տրված նախադասությունից դուրս գրել աղյուսակում նշված խոսքի մասերը:

Արան քայլում էր ցողապատ խոտերի միջով, բազմերանգ ծաղիկներ հավաքում:

գոյական	ածական

ՈՒՂԵՑՈՒՅՑ

4-րդ դասարանի գիտելիքների ստուգուիս ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՐԱՋԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Թեստը բաղկացած է 18 առաջադրանքներից, որոնք երեք տեսակի են՝ ընտրովի պատասխանով առաջադրանքներ, կարճ պատասխանով առաջադրանքներ և ընդարձակ պատասխանով առաջադրանքներ:

Ընտրովի պատասխան են պահանջում 1-11-րդ առաջադրանքները, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

Կարճ պատասխան են պահանջում թեստի 12-16-րդ առաջադրանքները, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

Ընդարձակ պատասխան են պահանջում 17-րդ և 18-րդ առաջադրանքները, որոնք խնդիրներ են: Այդ խնդիրները լուծելիս աշակերտը պետք է ներկայացնի խնդրի լուծման ամբողջ ընթացքը: 17-րդ խնդիրը լուծելիս՝ գծագիրը, 18-րդ-ը լուծելիս համառոտագրությունը պարտադիր են: Այդ խնդիրներից յուրաքանչյուրին տրվում է առավելագույնը 2-ական միավոր: Գնահատման քայլը՝ 1 միավոր:

Քննական աշխատանքի կատարման համար հատկացվում է 60 րոպե:

Ամփոփիչ վերջնական միավորը ստացվում է թեստի առաջադրանքների պատասխաններից աշակերտի վաստակած բոլոր միավորների գումարից (առավելագույնը՝ 20 միավոր), որը համապատասխանեցվում է 10 միավորանոց համակարգին:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՐԱԿ

Table with 4 columns: Միավորը, Գնահատականը, Միավորը, Գնահատականը. Rows: 1, 2-3, 4-5, 6-7, 8-10

Թեստի նմուշ

1-11-րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ:

1. Չորս հազար երեք հարյուր յոթ թվին համապատասխանող թիվն է՝

- 1) 4037 3) 4703
2) 4307 4) 4073

2. 360-ից 12-ով փոքր թիվն է՝

- 1) 480 3) 348
2) 372 4) 240

3. 768 թվի տասնյակների քանակն է՝

- 1) 6 3) 7
2) 76 4) 68

4. Աստղանիշի փոխարեն n-ը թվանշանի տեղադրման դեպքում ստացված թվերը դասավորված կլինեն նվազման կարգով. 8\*6, 856, \*75

- 1) 4 3) 7
2) 5 4) 9

5. 4 կգ 61 գ < 4 կգ \* 1գ անհավասարության մեջ աստղանիշի թվանշանն է՝

- 1) 4 3) 6
2) 5 4) 7


6. 2 օր 15 ժամը ժամերով հավասար է՝

- 1) 215 ժ 3) 63 ժ
2) 39 ժ 4) 135 ժ

7. Քառակուսու պարագիծը 132 սմ է: Քառակուսու կողմի երկարությունն է՝

- 1) 33 սմ 3) 43 սմ
2) 66 սմ 4) 22 սմ

8. Նշիր այն գծապատկերը, որի 3/7 մասը ներկված է:



9. Ճիշտ պնդում է՝

- 1) նվազելիս կստանաս, եթե հանելից հանես տարբերությունը
2) գումարելիներից մեկը մեծացնելիս, իսկ մյուսը փոքրացնելիս միևնույն միավորով գումարը չի փոխվում
3) 0-ից տարբեր երկու հավասար թվերի քանորդը հավասար է 0-ի
4) թիվը 10-ով բազմապատկելիս բավական է այդ թվի գրության վերջից երկու 0 ավելացնել

10. Կտրեցին 12 մ երկարությամբ մետաղալարի 1/4 մասը: Քանի մետր մետաղալար մնաց:

- 1) 3 մ 3) 9 մ
2) 6 մ 4) 48 մ

11. 25 - 5 \* 4 : 2 + 50 \* 2 արտահայտության արժեքն է՝

- 1) 180 3) 115
2) 130 4) 140

12-16-րդ առաջադրանքներում գրել պատասխանը

12. Որքա՞ն է CD հատվածի երկարությունը, եթե AD = 155 մմ, AB = 23 մմ, BC = 82 մմ:



Պատասխան՝ \_\_\_\_\_

13. Հաշվիր ամենամեծ զույգ քառանիշ և ամենափոքր կենտ եռանիշ թվերի տարբերությունը:

Պատասխան՝ \_\_\_\_\_

14. Դիր թվաբանական գործողության նշանները (+, -, \*, : ) այնպես, որ վերականգնվի հավասարությունը:

94 □54 □6 = 85

15. Հաշվիր 6532 - 5 \* (1253 : 7 + 536) արտահայտության արժեքը:

Պատասխան՝ \_\_\_\_\_

16. Կռահիր օրինաչափությունը և տրված թվերից հետո ավելացրու ևս մեկ թիվ:

324, 524, 924, 1524, .... :

Պատասխան՝ \_\_\_\_\_

17-18-րդ առաջադրանքներից հետո նշված տեղում մանրամասն ու հիմնավորված ներկայացրու առաջադրանքների լուծման ամբողջ ընթացքը:

17. Ուղղանկյունաձև սավանի երկարությունը 220 սմ է, որը 60 սմ-ով մեծ է լայնությունից: Հաշվիր այդ սավանի մակերեսը:

Պատասխան՝ \_\_\_\_\_

18. Երկու վայրերից, որոնց միջև եղած հեռավորությունը 564 կմ է, միաժամանակ իրար ընդառաջ շարժվեցին երկու ավտոմեքենա, նրանցից մեկի արագությունը 63 կմ/ժ էր: Ի՞նչ արագությամբ էր շարժվում երկրորդ ավտոմեքենան, եթե ավտոմեքենաները հանդիպեցին շարժվելուց 4 ժամ հետո:

Պատասխան՝ \_\_\_\_\_

Առարկայական օլիմպիադա

ՀՀ ԵՋՐԱԾԱԿԻՉ ՓՈՒԼՈՒՄ

Դպրոցականների առարկայական օլիմպիադայի ՀՀ եզրափակիչ փուլին մասնակցելու հայտ է ստացել Արցախի հանրապետական փուլում լավագույն արդյունք ցուցաբերած 51 աշակերտ: Մի քանի առարկաներից արդեն անցկացվել է եզրափակիչ փուլը, և ունենք լավագույն արդյունքներ:

Ասկերանի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ Մաքսիմ Թևոսյանը աշխարհագրություն առարկայից և Շուշիի Դանիել Ղազարյանի անվան միջնակարգ մասնագիտացված դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ Միկել Համբարձումյանը պատմություն առարկայից գրավել են առաջին տեղ՝ արժանանալով 1-ին կարգի դիպլոմի: Պատմությունից 3-րդ կարգի դիպլոմի է արժանացել Մարտակերտի շրջանի Հաթիբի միջնակարգ դպրոցի աշակերտ Ժորա Հարությունյանը: Նախիջևանի միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանի աշակերտ Սանասար Սարգսյանը աշխարհագրությունից գրավել է 3-րդ տեղ, իսկ մաթեմատիկայից արժանացել գովասանագրի: Ֆիզմաթ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Տիգրան Կիսիբեկյանը՝ ֆիզիկայից, Ստեփանակերտի հ. 6 հիմնական և Մաճկալաշենի միջնակարգ դպրոցների 5-րդ դասարանի աշակերտներ Գոռ Հակոբյանը և Գոռ Հարությունյանը՝ մաթեմատիկայից, Մարտակերտի հ.1 միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Տաթևիկ Բաղդասարյանը՝ պատմությունից արժանացել են գովասանագրի:

Օտար լեզուներից ունենք մրցանակներ. անգլերեն լեզվից 2-րդ կարգի դիպլոմի է արժանացել Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Սլավա Սեյրանյանը, ֆրանսերենից՝ Ստեփանակերտի հ. 2 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի Ալինա Ասրյանը:

Շնորհավորում ենք մեր մրցանակակիրներին: Օլիմպիադայի եզրափակիչ փուլը շարունակվում: Սպասում ենք նոր հաղթանակների:

Սեփ. լրատվություն

ԱՎԱՐՏԱԿԱՆ

9-րդ դասարանի «ՀԱՅՈՑ ԼԵՉՈՒ» ԱՌԱՐԿԱՅԻՅ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՅՈՒՅՅ

9-րդ դասարանի «Հայոց Լեզու» առարկայից ավարտական քննությունը անցկացվում է թեստով, որը պարունակում է 32 առաջադրանք:

1-12-րդ առաջադրանքները ընտրովի պատասխաններով են, կարող են ունենալ ճիշտ պատասխանի մեկ կամ մի քանի տարբերակ: Տրամադրված առանձին պատասխանների ձևաթղթում աշակերտը նշում է ճիշտ պատասխանը «X» նշումով:

Օրինակ՝

1 2
1 [ ] [ ]
2 [ ] [ ]
3 [x] [ ]
4 [x] [x]

13-16-րդ առաջադրանքները կարճ պատասխանով են՝ տրված հարցի պատասխանի ինքնուրույն դուրսբերմամբ: Կարճ պատասխանով 16-րդ առաջադրանքն ունի 4 ենթահարց: Յուրաքանչյուր առաջադրանքից հետո նշված տեղում աշակերտը գրում է ճիշտ պատասխանը և անցկացնում տրամադրված առանձին պատասխանների ձևաթուղթը:

17-32-րդ առաջադրանքները տեքստի հիման վրա կազմված առաջադրանքներ են, որոնցից 17-20-րդ, 26-29-րդ առաջադրանքները կարճ պատասխանով են, 21-25-րդ և 30-32-րդ առաջադրանքները՝ ընտրովի:

Ձևաթղթում տրված են սխալ նշված պատասխաններն ուղղելու հնարավորություններ:

Թեստ-գրքույկը չի ստուգվում, ստուգվում է միայն տրամադրված առանձին պատասխանների ձևաթուղթը (լրացված):

Յուրաքանչյուր առաջադրանքի և յուրաքանչյուր ենթահարցի ճիշտ պատասխանին տրվում է 1-ական միավոր: Միավոր պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

Թեստի առավելագույն միավորը 35 է, որը բերվում է գնահատման 20 միավորանոց համակարգի՝ համապատասխան սանդղակի միջոցով:

Թեստի առաջադրանքները լուծելու և պատասխանների ձևաթուղթը լրացնելու համար հատկացվում է 120 րոպե:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՐԱԿ

Table with 4 columns: Միավորներ, Գնահատական, Միավորներ, Գնահատական. Rows 0-1 to 13-14.

• Ցուցում

Տրամադրված առանձին պատասխանների ձևաթուղթը լրացվում է միայն կապույտ գրիչով:

Թեստի նմուշ

1-12-րդ առաջադրանքները կարող են ունենալ ճիշտ պատասխանի մեկ կամ մի քանի տարբերակ

1. Ձայնավոր հնչյունով սկսվող բառն է՝

- 1) յասաման 3) ողկույզ
2) սպասում 4) եղբայր

2. Բոլոր բառերի բաց թողած տեղերում միևնույն տառը գրվող շարքն է (փակագծերում նշվածներից որևէ մեկը)՝

- 1) աման-ոյա, երկ-ոյակ, ան-րակ (օ կամ ո)
2) փամ-ուշտ, ս-րթնել, ծամ-րուկ (պ կամ փ)
3) մա-թանք, ներգա-թ, մա-ճիր (ղ կամ խ)
4) բա-ադ, սովա-ուկ, մի-իոն (լ կամ լլ)

3. Բոլոր բառերի բաղադրիչները անջատ գրվող շարքն է՝

- 1) մուգ (կապույտ), դռն(դուռ), ի (սրտե)
2) ամենա(բարձր), ծովից (ծով), դեմ(դիմաց)
3) դեմ(ամենել), ուս(ուսի), մեկ(երկրորդ)
4) անթիվ(անհամար), հարյուր (մեկ), մեջ (ընկնել)

4. Դարձվածք կա՝

- 1) Հորովելը գեղջուկի Դահլիճներում է հնչում...
2) Արևակող լեռան լանջին Նուռն է ճաքել քաղցրությունից:
3) Ամպը լեզուն կուլ է տվել, Հնար չունի որոտալու:
4) Պատահում է՝ սիրտդ լցվում Ու չի լալիս ժամանակին...

5. Բարդ բառերի շարքն է՝

- 1) փառահեղ, ուղտապան, պարզորոշ
2) խոտհարք, հովհար, օրհներգ
3) ճանապարհ, հրթիռ, շարժառիթ
4) մեղմօրոր, մարդամոտ, հերարձակ

6. Հոմանիչ բառերի շարքն է՝

- 1) շողոքորթ, քծնող, շատախոս
2) սերել, ծագել, առաջանալ
3) շավիղ, կածան, թավուտ
4) հակիրճ, համառոտ, թյուր

7. Շարքի բոլոր բառերը ենթարկվում են ի հոլովման՝

- 1) կին, դիմում, աղախին
2) տղա, երեխա, վայրկյան
3) տղամարդ, Աճի, եղանակ
4) վերարկու, աղջիկ, ածխաթուր

8. Շարքի բոլոր բառերը դերանուններ են՝

- 1) ուրիշ, սրանք, բոլոր
2) դեմուդեն, նույնքան, ամբողջ
3) այսչափ, ամենուր, միևնույն
4) միմյանց, ոմն, որպեսզի

9. Ածականների շարքն է՝

- 1) պատահական, ոսկե, հիմա
2) լռակյաց, այլուրոտ, մաքուր
3) այսպիսի, ծնեռային, ծեր
4) սարսափելի, դողացող, իմաստալից

10. Նախադասության քերականական և տրամաբանական շարունակության տարբերակն է՝

Շարունակելով ճանապարհը՝ հասանք մի հեղեղատի,

- 1) քանի որ խորհուրդ տվեցի ընկերոջս սպասել, մինչև հեղեղը դադարի:
2) որոնք բարձունքից լսվում էր բուխ կռիվներ:
3) թեկուզ և հանգստի համար հարմար պահ չէին ընտրել:
4) որից պետք է անցնեինք դիմացի կիրճը:

11. Անձնավորում պարունակող հատվածն է՝

- 1) Կապույտ մրրիկ է պայթել, Կապույտ մշուշ է... Ուռին ուզում է փախչել, Բայց արդեն ուշ է:
2) Հավքը բախվեց ուռենուն... Ոստերից նրա, Մուրակներ թափվեցին Քարերի վրա:
3) Սարի լանջին ժայռի տակ, Ջուր էր բխում սառնորակ...
4) Իմ պապը մեր գյուղի Պատերը շարել է Եվ բոլոր կամերը Մեծ-մեծակ քարել է:

12. Կետադրական սխալ կա՝

- 1) Պատահել էր՝ կայծակը խփել էր ոչխարի հոտին, և հոտի կեսը այրվել էր:
2) Խատուտիկ ջրածուրը՝ քարից քար թռչելով, որսում էին մեծերը:

- 3) Կերևում՝ բլրակի գլխին, կանգնել էր հովիվը՝ մահակին հենված:
4) Ներքևը, Բասուտա գետի մյուս ափին, թառել էին մի քանի տներ:

13-16-րդ առաջադրանքներում գրել պատասխանը

13. Նախադասությունները դասավորի՞ր տրամաբանական հաջորդականությամբ:

Գրի՞ր միայն նախադասությունների համարները:

- 1. Կամ մի թեթև հովից ծառերի տերևները շարժվեցին:
2. Մեկ էլ տեսար մի բզեզ թռավ, և նրա բզզոցը լսվեց օդում միլիոնավոր բզեզների բզզոցի ուժգնությամբ:
3. Օրվա այն պահերին, երբ ամառային արևը կանգնում էր ուղիղ գեմիթում, մի թանձր լռություն էր խտանում շուրջը:
4. Եվ տարածվեց տերևների ձայնը ծովի ալեկոծության պես ալիք-ալիք թավալումով:

Պատասխան՝ \_\_\_\_\_

14. Գտի՞ր նախադասության մեջ թույլ տրված բառազոր-ծածության սխալը և ուղղի՞ր:

Թեև վստահ էր, որ դուռը փակել է սողնակով, սակայն անհանգստության զգացմունք ունեցավ, հետ դարձավ կրկին ստուգելու՝ փակվա՞ծ է արդյոք:

Պատասխան՝ սխալ է՝ \_\_\_\_\_ պետք է լինի՝ \_\_\_\_\_

15. Գտի՞ր նախադասության մեջ թույլ տրված քերականական սխալը և ուղղի՞ր:

Թույլ մի՛ տուր, որ նախատեն քեզ ծուլության համար, ծիծաղեն քո վրա, որ չիրականացրի քո վաղեմի երազանքը:

Պատասխան՝ սխալ է՝ \_\_\_\_\_ պետք է լինի՝ \_\_\_\_\_

16. Տրված բառերը տեղադրել՝ բաց թողած տեղերում՝ ենթարկելով համապատասխան փոփոխությունների:

Տղան ..... և վազեց գլորվող ..... հետևից, վերցրեց դրանք, ապա երկու տուփը ձեռքին՝ եկավ ու ..... փաթաթվեց ..... փեշերին:

(լաց լինել, մայր, ցատկել, տուփ)

Պատասխան՝ 1. \_\_\_\_\_
2. \_\_\_\_\_
3. \_\_\_\_\_
4. \_\_\_\_\_

17-32-րդ առաջադրանքները կատարել ըստ տեքստի

I
1. Երկրի մթնոլորտի վերին նոսր շերտերում՝ 80-1000 կմ բարձրության վրա երբեմն տեղի է ունենում բնության զարմանահարաշ երևույթներից մեկը՝ բևեռափայլը: 2. Դա մի յուրատեսակ լուսարձակում է, որ դիտվում է հիմնականում Երկրի բևեռային շրջաններում, հազվադեպ՝ նաև միջին լայնություններում: 3. Հայաստանում 1098-1100 թվականներին դիտվել է չորս բևեռափայլ: 4. Բևեռափայլը անչափ գրավիչ տեսարան է. երկնքի ամբողջ հյուսիսային կողմը լուսավորվում է կարմիր ու կանաչ երկու հսկայական, շողոզուկ կամարներով: 5. Անընդհատ ձևափոխվելով ու երփներանգվելով՝ կամարները մեկ անհետանում են, մեկ նորից հայտնվում: 6. Հանկարծակի մութ երկինքը ասես նետահարում են պայծառ ճառագայթները, իսկ ժամանակ առ ժամանակ օդում կախվում են կարմիր ծուլերով զմրուխտե «վարագույրներ»: 7. Պայծառ, հիասքանչ բևեռափայլը երկնքում փողփողում է մի քանի ժամ անընդհատ:

ՈՒՂԵՑՈՒՅՑ

5 II 1. Բևեռափայլերը Արեգակի ակտիվության հետևանք են: 2. Արեգակի հսկայական շիկացած գունդը տիեզերական տարածություն է ճառագայթում վիթխարի քանակությամբ ջերմություն և արտանետում էլեկտրականությամբ լիցքավորված նյութի մանրագույն մասնիկների հոսքեր: 3. Այս երևույթը կոչվում է արեգակնային քամի: 4. Հասնելով երկրի մթնոլորտի վերին շերտերը՝ այդ մասնիկները բախվում են օդի մոլեկուլներին, և սրանք սկսում են փայլվել տարբեր գույներով՝ դեղին, կանաչ, կապույտ, կարմիր, մանուշակագույն, նարնջագույն: 5. Բևեռափայլի աղեղները երբեմն անցնում են 5000 կմ-ից: 6. Երկրից բացի միակ այլ մոլորակը, որտեղ մինչ օրս նկատվել են բևեռափայլեր, Սատուրնն է:

17-20-րդ առաջադրանքներում գրել պատասխանը

17. 80 թիվը գրիր տառերով: Պատասխան՝ \_\_\_\_\_

18. I հատվածից դուրս գրիր փոխաբերական իմաստով գործածված մեկ բառ: Պատասխան՝ \_\_\_\_\_

19. Գրիր մեկ բան, ինչին կարող են նմանվել բևեռափայլերը: Պատասխան՝ \_\_\_\_\_

20. I հատվածից դուրս գրիր մեկ բառ, որում երկինջյունի հնչյունափոխություն կա: Պատասխան՝ \_\_\_\_\_

21-25-րդ առաջադրանքները կարող են ունենալ ճիշտ պատասխանի մեկ կամ մի քանի տարբերակ

21. Գերադրական աստիճանով դրված ածականն է՝

- 1) հիասքանչ 3) մանրագույն

- 2) վիթխարի 4) նարնջագույն

22. II հատվածում կապ խոսքի մաս պարունակող նախադասությունն է՝

- 1) 2 3) 4 2) 3 4) 6

23. I հատվածում վերաբերական պարունակող նախադասությունն է՝

- 1) 3 3) 5 2) 4 4) 6

24. I հատվածում անորոշ դերբայ պարունակող նախադասությունն է՝

- 1) 1 3) 5 2) 3 4) 6

25. Բաղադրյալ ստորոգյալ չկա՝

- 1) I. 4 3) II. 1 2) I. 5 4) II. 6

26-29-րդ առաջադրանքներում գրել պատասխանը

26. Գրիր I հատվածից այն բարդ նախադասության համարը, որը կապակցվել է դերանունով: Պատասխան՝ \_\_\_\_\_

27. I հատվածից դուրս գրիր բազմապատկական բայը: Պատասխան՝ \_\_\_\_\_

28. I. 1. նախադասությունից դուրս գրիր մակբայը: Պատասխան՝ \_\_\_\_\_

29. Գրիր I հատվածի այն նախադասության համարը, որում ստորոգյալի լրիվ գեղջում կա: Պատասխան՝ \_\_\_\_\_

30-32-րդ առաջադրանքները կարող են ունենալ ճիշտ պատասխանի մեկ կամ մի քանի տարբերակ

30. Տեքստից չբխող կամ նրա բովանդակությանը հակասող միտքն է՝

- 1) Բևեռափայլի կամարները կարող են ձգվել հազարավոր կիլոմետրեր: 2) Պատահել է, որ Հայաստանի տարածքում 2 տարում դիտվել է 4 բևեռափայլ: 3) Տիեզերքում միակ մոլորակները, որոնց վրա կարող են բևեռափայլեր տեղի ունենալ, երկիրն ու Սատուրնն են: 4) Բևեռափայլերը կապված են Արեգակի ակտիվության հետ:

31. Նախադասության անդամներից որի՞ ձևաբանական վերլուծության մեջ սխալ կա:

Արեգակի հսկայական շիկացած գունդը տիեզերական տարածություն է ճառագայթում վիթխարի քանակությամբ ջերմություն:

- 1) Արեգակի - հատուկ անուն 2) շիկացած - ածական 3) ճառագայթում է - բայ, սահմանական եղանակ 4) ջերմություն - գոյական, անորոշ առում

32. Տրված նախադասության մեջ ընդգծված բառի կատարած պաշտոնն է՝

Հասնելով երկրի մթնոլորտի վերին շերտերը՝ այդ մասնիկները բախվում են օդի մոլեկուլներին:

- 1) տեղի պարագա 2) հանգման անուղղակի խնդիր 3) ուղիղ խնդիր 4) ձևի պարագա

9-րդ դասարանի «ՄԱԹԵՄԱՏԻԿԱ» ԱՌԱՐԿԱՅԻՅ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

9-րդ դասարանի «Մաթեմատիկա» առարկայից ավարտական քննությունը անցկացվում է քեստով, որը պարունակում է 32 առաջադրանք:

1-10, 13, 14, 22, 23-րդ առաջադրանքները ընտրովի պատասխաններով են, կարող են ունենալ ճիշտ պատասխանի մեկ կամ մի քանի տարբերակ: Տրամադրված առանձին պատասխանների ձևաթղթում աշակերտը նշում է ճիշտ պատասխանը «X» նշումով:

Օրինակ՝

- 1 2 1   2   3   4

11, 12, 15-21, 24-29-րդ առաջադրանքները կարճ պատասխան են պահանջում: Յուրաքանչյուր առաջադրանքից հետո նշված տեղում աշակերտը գրում է ճիշտ պատասխանը, առանց չափման միավորի անցկացնում տրամադրված առանձին պատասխանների ձևաթուղթ:

30-32-րդ առաջադրանքներն ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքներ են, որոնց լուծման ամբողջ ընթացքը մանրամասն ու հիմնավորված պետք է ներկայացվի տրամադրված առանձին պատասխանների ձևաթղթում:

Ձևաթղթում տրված են սխալ նշված պատասխաններն ուղղելու հնարավորություններ:

1-29-րդ առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր: Սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

30-32-րդ առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է առավելագույնը 2 միավոր: Գնահատման քայլը՝ 1 միավոր:

Թեստի առավելագույն միավորը 35 է, որը բերվում է գնահատման 20 միավորանոց համակարգի՝ համապատասխան սանդղակի միջոցով:

Թեստ-գրքույկը չի ստուգվում, ստուգվում է միայն տրամադրված առանձին պատասխանների ձևաթուղթը (լրացված):

Թեստ-գրքույկի ազատ մասերում կարող եք սևագրել: Թեստի առաջադրանքները լուծելու և պատասխանների ձևաթուղթը լրացնելու համար հատկացվում է 120 րոպե:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

Միավորներ	Գնահատական	Միավորներ	Գնահատական
0-1	1	15-16-17	11
2	2	18-19-20	12
3	3	21-22	13
4	4	23-24	14
5	5	25-26	15
6	6	27-28	16
7-8	7	29-30	17
9-10	8	31-32	18
11-12	9	33-34	19
13-14	10	35	20

Ցուցումներ

- Քննության ժամանակ աշակերտը կարող է օգտագործել պարզագույն հաշվիչ, քանոն, կարկին:
- Տրամադրված առանձին պատասխանների ձևաթուղթը լրացվում է միայն կապույտ գրիչով:



ՈՒՂԵՑՈՒՅՑ

Թեստի նմուշ

1-10-րդ առաջադրանքները կարող են ունենալ ճիշտ պատասխանի

մեկ կամ մի քանի տարրերակ

- 1. 11 և 15 թվերի քառակուսիների գումարն է՝
1) 136 2) 576 3) 236 4) 346
2. Տրված թվանշաններից ընտրել այն թվանշանը, որը տեղադրելով 376 \*4 հնգանիշ թվի աստղանիշի փոխարեն, բաժանվի 3-ի:
1) 1 2) 2 3) 3 4) 4
3. Մեկ ցենտները կազմում է մեկ տոննայի
1) 100 2) 10 3) 1 4) 1/100

տոկոսը

- 4. 108 և 72 թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարն է՝
1) 216 2) 72 3) 36 4) 12
5. 2x^3y - 3x^2y^2 + x^3y^2 - 5 բազմանդամի աստիճանն է
1) 4 2) 3 3) 5 4) 2
6. x^2 - 7x - 2 = 0 հավասարման արմատների գումարն է՝
1) 7 2) -7 3) 2 4) -2
7. y = 3x + 1 ֆունկցիայի գրաֆիկի աբսցիսների առանցքի հատման կետն է՝
1) (1/3; 0) 2) (1; 0) 3) (-1/3; 0) 4) (0; 3)
8. Չամբյուղում կա 2 կանաչ և 3 կարմիր խնձոր: Չամբյուղից կանաչ խնձոր հանելու հավանականությունն է՝
1) 1 2) 2/3 3) 3/5 4) 2/5
9. y = (2x-6)/(2x+1) ֆունկցիայի զրոներն են՝
1) -0.5 և 3 2) 3 3) -0.5 4) -3
10. 12x + 15 = 3(3x - 1) հավասարման լուծումն է՝
1) 6 2) -6 3) -3 4) 4/7

11-12-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանները գրել

ձևաթղթի համապատասխան տեղում

- 11. Գտնել AB հատվածի միջնակետի կոորդինատների արտադրյալը, եթե A և B կետերի կոորդինատներն են՝ A(-2;4), B(-6;7)
Պատասխան \_\_\_\_\_
12. Գտնել AB վեկտորի երկարությունը, եթե A և B կետերի կոորդինատներն են՝ A(-2;4), B(-6;7)
Պատասխան \_\_\_\_\_

13-14-րդ առաջադրանքները կարող են ունենալ ճիշտ

պատասխանի մեկ կամ մի քանի տարրերակ

- 13. 5;8; ... թվաբանական պրոգրեսիայի 8 անդամների գումարն է՝
1) 248 2) 124 3) 104 4) 136
14. 4;-1; ...անվերջ նվազող երկրաչափական պրոգրեսիայի գումարն է՝
1) 3 2) 1/3 3) 3.2 4) 4 1/4

15-21-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանները

գրել ձևաթղթի համապատասխան տեղում

- 15. Հաշվել ((5/9) - 1 1/6 \* 0,5) : 5/9 + |-0.25|
Պատասխան \_\_\_\_\_
16. Առաջին ապրանքի գինը 250 դրամ է, երկրորդ ապրանքը առաջինից թանկ է 20%-ով : Գտնել երկրորդ ապրանքի գինը:
Պատասխան \_\_\_\_\_
17. Խաղողը չորացնելիս կորցնում է իր զանգվածի 75%-ը: Որքան խաղող պետք է վերցնել որպեսզի ստացվի 3 կգ չորացրած խաղող:
Պատասխան \_\_\_\_\_

- 18. Գտնել sqrt(8 + sqrt(15)) \* sqrt(8 - sqrt(15)) արտահայտության արժեքը:
Պատասխան \_\_\_\_\_
19. Գտնել (sqrt(a^5b^3) - sqrt(a^3b^5)) : sqrt(a^3b^3) արտահայտության արժեքը, եթե a=4, b=1:
Պատասխան \_\_\_\_\_
20. Գտնել (x+3)/(x-1) >= 0 անհավասարման լուծումների բազմությունը:
Պատասխան \_\_\_\_\_
21. Գտնել -x^2+3x+10 > 0 անհավասարման լուծումը:
Պատասխան \_\_\_\_\_

22-23-րդ առաջադրանքները կարող են ունենալ ճիշտ պատասխանի

մեկ կամ մի քանի տարրերակ

- 22. y = |x - 3| + 2 ֆունկցիայի վերաբերյալ ճիշտ պնդում է՝
1) ֆունկցիայի գրաֆիկը աբսցիսների առանցքը հատում է ճիշտ երկու կետում
2) ֆունկցիաների գրաֆիկի համաչափության առանցքը x=3 ուղիղն է
3) ֆունկցիան նվազող է
4) ֆունկցիայի առանցքների բազմությունը [2, +infinity) միջակայքն է
23. {x^2 - 5x + 6 <= 0, x^2 + x - 2 >= 0} անհավասարումների համակարգի լուծումն է՝
1) (-infinity; 3] 2) [-2; 3] 3) [2; 3] 4) empty set

24-29-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանները գրել

ձևաթղթի համապատասխան տեղում

- 24. Ուղղանկյունանիստի հիմքը 4սմ կողմով քառակուսի է, իսկ կողմնային նիստի անկյունագիծը 5սմ է: Գտնել ուղղանկյունանիստի բարձրությունը:
Պատասխան \_\_\_\_\_
25. Ուղղանկյունանիստի հիմքը 6սմ և 9սմ կողմերով ուղղանկյունի է, իսկ կողմնային մակերևույթի մակերեսը հավասար է 150սմ^2: Գտնել ուղղանկյունանիստի ծավալը:
Պատասխան \_\_\_\_\_
26. Ջերմանավը 10 ժամում կարող է անցնել 110կմ հոսանքի ուղղությամբ: Հոսանքի արագությունը 2կմ/ժ է: Գտնել ջերմանավի սեփական արագությունը:
Պատասխան \_\_\_\_\_
27. Քաղաքից բեռնատար մեքենան շարժվեց 60կմ/ժ արագությամբ: 2ժամ 30 րոպեից հետո նույն քաղաքից նրա ետևից շարժվեց մարդատար մեքենան՝ 80կմ/ժ արագությամբ: Քանի ժամ հետո մարդատար մեքենան կհասնի բեռնատարին:
Պատասխան \_\_\_\_\_
28. Շեղանկյան անկյունագծերը 5սմ և 12 սմ են: Գտնել շեղանկյան մակերեսը:
Պատասխան \_\_\_\_\_
29. Գտնել զուգահեռագծի բութ անկյունը, եթե նրա մակերեսը 40սմ^2 է, իսկ կողմերը 10սմ և 8սմ են:
Պատասխան \_\_\_\_\_

30-32-րդ առաջադրանքների լուծման ամբողջ ընթացքը մանրամասնորեն և հիմնավորած ներկայացնել առաջադրանքից հետո նշված տեղում

- 30. a-ի ի՞նչ արժեքների դեպքում x^2-(a-1)x+1=0 հավասարումն ունի զոնե մեկ արմատ:
Պատասխան \_\_\_\_\_
31. Հավասարաարուն սեղանի հիմքերը հավասար են 2սմ և 6սմ, իսկ բութանկյունը 120° է: Գտնել սեղանի մակերեսը:
Պատասխան \_\_\_\_\_
32. Առաջին խողովակը ավազանը կարող է լցնել երկրորդից 12 ժամով ուշ, իսկ միասին կարող են լցնել 8 ժամում: Միայն առաջին խողովակով քանի՞ ժամում կլցվի ավազանը:
Պատասխան \_\_\_\_\_

ՄԱՐԶԱԿԱՆ

# ՈՉ ՄԻ ԲԱՆ ՆԵՃՏ ՉԻ ՏՐԿՈՒՄ, ՈՒՂՂԱԿԻ ՊԵՏՔ Է ՊԱՅՔԱՐԵԼ



Մարզական էջի հետետորդներն առաջին անգամ չէ, որ կարողում են Մուայթայի աշխարհի չեմպիոն եւ փոխչեմպիոն, Եվրոպայի չեմպիոն եւ բրոնզե մեդալակիր, Եվրասիայի չեմպիոն Դավիթ ՉԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ մասին: Ընթերցողներին հայտնի է նաեւ, որ 44-օրյա պատերազմին մասնակցած մեր հայրենակից մարզիկը վիրավորում էր ստացել, որի հետեւանքով առողջական լուրջ խնդիրներ էին առաջացել: 2020թ. պատերազմի ժամանակ՝ հոկտեմբերի 28-ին շրջափակումից դուրս գալիս Դավիթը թշնամու հրետանու զարկից բեկորային վիրավորում ստացավ: Բեկորները դիպան ծախ կողմին՝ վնասելով

ծախ ձեռքը, ուսը, կրծքավանդակը մասամբ, գլխի ծախ կողմը: Գլխում օտար մարմիններ կան, որոնք, ըստ բժիշկների եզրակացության, վիրահատման ենթակա չեն: Չախ աչքի տեսողությունը հինգ տոկոս է դարձել վնասվելուց հետո: Խոսակցություններ կային, որ միգուցե պետք լինի սպորտը թողնել: Բայց Դավիթ Չայրապետյանն ասում էր, որ այնքան տարիներ նվիրվել է սպորտին ու պայքարին ոչ թե դժվարության հանդիպելով՝ թողնելու նպատակով, այլ ամեն պարագայում պայքարելու: Առողջական խնդիրների դեմ պայքարող մարզիկը, չնայած ամեն ինչին, սկսել էր պարապմունքները՝ աստիճանաբար վերականգնելով մարզական լավ վիճակը: Փետրվարին մա մասնակցեց Եվրոպայի Մուայթայի առաջնության Թուրքիայում եւ կարողացավ մրցանակային երրորդ տեղ զբաղեցնել:

**- Դավիթ, պատմեք Ստամբուլում կայացած Եվրոպայի Մուայթայի առաջնությանը Ձեր մասնակցելու մասին:**

- Փետրվարի 13-21-ը Թուրքիայի Ստամբուլ քաղաքում տեղի ունեցավ Մուայթայի Եվրոպայի առաջնությունը, որին մասնակցող 44 երկրների մեջ էինք նաեւ մենք՝ Հայաստանի հավաքականի կազմում: Լիտվան ներկայացնող մարզիկի հետ մենամարտ ունեցա, որին հաղթեցի նույնպես առաջին ռաունդում: Վերջինս 2021թ. աշխարհի փոխչեմպիոն է: Մենամարտի մեկնաբաններն անընդհատ նշում էին, որ Հայաստանը ներկայացնող մարզիկը հաղթեց նույնպես ու իրենց թուրք մարզիկին կհանդիպի կիսաեզրափակչում: Բայց թուրք մարզիկը չկարողացավ անցնել կիսաեզրափակիչ: Ես հանդիպեցի Պորտուգալիան ներկայացնող մարզիկին կիսաեզրափակչում եւ միավորների չնչին տարբերությամբ պարտվեցի՝ զբաղեցնելով երրորդ տեղը: Բայց դա ինձ համար պարտություն չէ, այլ հաղթանակ, քանի որ գտնվելով մեր վաղեմի թշնամու հողում, երբ դու լրիվությամբ օտարությամբ ես շրջապատված, կարողանում ես ծածանել քո եռագույնը, իսկ թուրք մարզիկն իր հողում չի կարողանում այդ ամենին հասնել:

**- Պատմեք Ձեր ինքնազագոյության մասին, ինչպե՞ս են անդրադառնում առողջական խնդիրները մրցույթներում հանդես գալու վրա:**

- Վերջին չարաբաստիկ պատերազմում մարմնի ծախակողմյան մասում ստացած լուրջ վիրավորման հետեւանքով վնասվել էին ձեռքս, ուսս, կրծքավանդակս, գլխիս ծախ մասը, ծախ աչքիս տեսողությունը գրեթե լրիվությամբ կորցրել էի: Իմ առջեւ հարց էր դրված՝ արդյո՞ք այդ ամենից հետո կկարողանամ սպորտում սկսել զրոյից ու կայունանալ: Ճիշտ տեղում եւ ճիշտ ժամանակին իմ կողքին կային ինձ ուժ տվող մարդիկ՝ իմ հարազատները, ընկերներս, մարզիչներս, եղբայրս, ծնողներս: Բնականաբար վիրավորումն ինձ խանգարում է: Առողջական ոչ լիարժեք կայունությունը տալիս է իր բացասական հետեւանքները. մրցույթներում չես կարողանում լիարժեք հանդես գալ: Բայց մյուս կողմից էլ ես ինձ ապացուցելու առաջնահերթ շատ բաներ ունեմ, եւ դա էլ ինձ ուժ է տալիս, որպեսզի կանգ չառնեմ, որովհետեւ կյանքում յուրաքանչյուր փորձություն ունի իր ճանապարհի դժվար հատվածը, որը պետք է հաղթահարել անկախ ամեն ինչից: Ոչ մի բան հեշտ չի տրվում, ուղղակի պետք է պայքարել:

**- Ազատ ժամանակ ինչո՞վ եք զբաղվում: Ունե՞ք որե՞ն ուրիշ զբաղմունք սպորտից դուրս:**

- Եթե մոտակա ժամանակները չեն լինում մրցաշարեր, եւ օրգանիզմս հանգիստ է լինում, սպորտից դուրս օրվա գերակշռող մասն անց եմ կացնում ընկերներիս հետ: Ժամանակս մեծ մասն անց եմ կացնում ընկերական շրջապա-

տում, անձնական աշխատանքներով եմ զբաղվում:

**- Առաջիկայում մրցաշարերի կրկին մասնակցել պատրաստվո՞ւմ եք:**

- Պատրաստվում եմ մասնակցել պրոֆեսիոնալ մենամարտի, որը տեղի կունենա մարտի 25-ին Մեքսիկայում, որտեղ նույնպես ներկայացնելու եմ իմ Հայրենիքը, իմ եռագույնը: Պրոֆեսիոնալ ասպարեզում մայիսին կլինեն շատ հետաքրքիր նորություններ: Չեմ ուզում ժամանակից առաջ ընկնել, կասեմ հետեւյալը. առաջիկայում ունեմ աշխարհի առաջնություն, Եվրոպայի ուսանողական առաջնություն, աշխարհի ուսանողական առաջնություն: Շատ ծանր, բայց հետաքրքիր տարի կլինի:

**- Մարզիչն ի՞նչ դեր ունի Ձեր մարզական հաջողությունների հասնելու ճանապարհին, ի՞նչ հարաբերությունների մեջ եք միմյանց հետ:**

- Իմ մարզումները բնականաբար մենակ չեն անում: Երբ մարդիկ ասում են, թե իրենք կարող են մենակ պարապել եւ լուրջ արդյունքի հասնել, հավատացեք, որ այդ մարդիկ սպորտից ոչ մի գաղափար չունեն: Ես ունեմ մարզիչներ, որոնց հետ ջերմ ընկերական հարաբերությունների մեջ եմ: Մենք մեկ ընտանիքի պես ենք իմ մարզիչներ Ալեքսան Աղաբալյանի, Հայկ Հայրապետյանի եւ Գարեգին Աղաբալյանի հետ: Յուրաքանչյուր փորձության՝ մրցաշարի պատրաստվում ենք միասին, հաղթահարում ենք միասին, քննարկում ենք մրցակիցների թույլ եւ ուժեղ կողմերը, մշակում ենք համապատասխան մարտավարություն:

**- Ի՞նչ եք ցանկանում ասել մեր ընթերցողներին:**

- Սպորտսմեններ շատ կան, բայց իրական սպորտսմեններին կարելի է հաշվել մատների վրա: Ցավոք, սպորտսմենների անվան տակ հանդես են գալիս նաեւ ինքնակոչ մարզիկներ, որոնց խայտառակ ստվերում անտեսանելիության են մատնվում իսկական աթլետները: Սպորտի ասպարեզում ներկայիս մեր կարգավիճակը խաբուսիկ է: Խնդրանքով, կոչով, որոշ տեղ, ինչու չէ, նաեւ պահանջով դիմում եմ պատկան մարմիններին՝ անուշադրության չմատնել, օգնել, աջակցել արցախցի մարզիկներին, որպեսզի սպորտի այդ չնչին քանակություն ունեցող մասնիկը զարգանա՝ լինի պրոֆեսիոնալ, թե սիրողական սպորտի ոլորտում: Ներկայում սպորտը այն միջոցներից է, որը կարող է ճանաչելիություն տալ աշխարհից կտրված մեր փոքրիկ երկրին:

Ընթերցողներին ասում եմ՝ պարապել սպորտով, մի՛ հուսահատվեք եւ մի՛ նահանջեք դժվարությունների առջեւ, եղեք պայքարող, ոչ թե՛ նահանջող:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

# ՀՐԱԶԳՈՒԹՅԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐ՝ ԱՆԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՈՒԹՅԱՐ



նաև անհատական մրցակարգով:

Ընդհանուր միավորների հաշվարկով անհատական մրցակարգով լավագույն հրաձիգներ են ճանաչվել Մոնթե Ղարախանյանը (1-ին տեղ), Կառլեն Բաբայանը (2-րդ տեղ), Անահիտ Ներսիսյանը (3-րդ տեղ):

Թիմային մրցակարգով 1-ին տեղում է Ստեփանակերտի հ. 2 հիմնական դպ-



ԱՀ ՊԲ կազմավորման 30-ամյակի առթիվ «Ձորաց ակումբ» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ և ԱՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ մարտի 9-ին աշակերտների միջև անցկացվեցին հրաձգության մրցումներ:

2-րդ մրցանակային տեղը զբաղեցրել է Հաղորթ Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցը, իսկ 3-րդ տեղում Ստեփանակերտի հ. 9 հիմնական դպրոցն է:

Նպատակը ռազմական գործի հանդեպ հետաքրքրություն առաջացնելն է, լավագույն պատանի հրաձիգներին ի հայտ բերելն ու դպրոցականներին հայրենիքի պաշտպանությանը նախապատրաստելը: Մրցումներին մասնակցեցին Ստեփանակերտի հանրակրթական ուսումնական հաստատությունների հավաքական ջոկերը: Հատկանշական է, որ յուրաքանչյուր թիմի 5 հրաձիգներից 2-ն աղջիկներ էին: Հրաձիգներն իրենց ուժերը փորձել են

«Ձորաց ակումբ» հասարակական կազմակերպության կողմից անհատական մրցակարգում առաջնային տեղեր զբաղեցրած մասնակիցները պարգևատրվեցին սմարթֆոններով, իսկ մրցանակային տեղեր զբաղեցրած թիմերը՝ օդամղիչ հրացաններով: Առաջնային տեղեր զբաղեցրած թիմերի զինղեկները կազմակերպության կողմից դրամական պարգևներ ստացան:

ԱՀ ԿԳՄՍՆ

# ՄԱՐԶԱԿԱՆ ՆՈՐ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ



Մարտի 4-ից 7-ը Երևանում տեղի է ունեցել ՀՀ ուշուի պատանիների և երիտասարդների առաջնությունը, որին մասնակցում էին նաև արցախցի մարզիկները՝ Սանդա ուշու, Թառու և Վինգ Չուն մարզաճերից:

Սանդա ուշու մարզաճում Արցախի հավաքական թիմը նվաճել է 11 ոսկե, 7 արծաթե և 11 բրոնզե մեդալ: Թառու ուշու մարզիկները մրցում էին չորս կոմպլեքսային կարգով՝ սրով, փայտով, նիզակով և առանց զենքի:

Այս մարզաճում արցախցի մարզիկներից 9-ը արժանացել է ոսկե, 5-ը՝ արծաթե մեդալի: Վինգ Չուն մարզաճում ունենք 2 ոսկե, մեկ արծաթե և մեկ բրոնզե մեդալակիր:

ԱՀ ԿԳՄՍՆ



ԵՐԻՇԵ ԶԱՐԵՆՑ-125

ԴՐԱԿՆԵՐ ԵՐԻՇԵ ԶԱՐԵՆՑԻ ՓՈԹՈՐԿԱԼԻՑ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Երիշե Զարենցը ծնվել է ստեղծագործել է մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ աշխարհը եռում էր տարածաշրջանային և համաշխարհային պատմական բուռն իրադարձություններից: Այդ իրադարձությունների հորձանուտում էր հայտնվել նաև Հայաստան աշխարհը: Դեռևս 19-րդ դարի 90-ական թվականներին Արևմտյան Հայաստանն արդեն իսկ դժոխքի էր վերածվել: Սուլթանհամիդյան ջարդերը հարյուր հազարավոր մարդկանց կյանքեր խլեցին: 20-րդ դարի սկզբին էլ Արևելյան Հայաստանը հայտնվեց ռուսական առաջին հեղափոխության (1905-1907թթ.) ազդեցության ներքո, ազգամիջյան հարաբերությունները գերլարված վիճակում էին, բախումները՝ անխուսափելի: Սուլթանհամիդյան կոտորածներից դեռ ուշքի չեկած Թուրքիայում երիտթուրքերը եկան իշխանության, որոնք էլ իրականացրին մարդկության մեծագույն ոճրագործությունը՝ հայերի ցեղասպանությունը 1915թ.: Առաջին համաշխարհային պատերազմը, սոցիալիստական հեղափոխությունը և քաղաքացիական պատերազմները Ռուսաստանում, աշխարհում առաջին սոցիալիստական պետության ստեղծումը չափազանց խոր ազդեցություն ունեցան երիտասարդ Զարենցի աշխարհայացքի ձևավորման, պատմական իրողությունների ընկալման ու վերլուծության, մարդկային հարաբերությունների նկատմամբ սեփական կարծիքն ունենալու և այն գեղարվեստական ստեղծագործություններում արտացոլելու վրա: Զարենցի կյանքի ու գործունեության ամեն մի դրվագ մեր ժողովրդի անցյալի, ներկայի ու ապագայի խորհուրդն ունի:

Զարենցի մանկությունն անցել է ծննդավայր Կարս քաղաքում (ծնվել է 1897թ. մարտի 13-ին): Սովորել է սկզբում հայկական դպրոցում, հետո՝ ռուսական ռեալական ուսումնարանում (ուսումնարանում ծրագրերի մեջ գերակշռում էին բնական և ճշգրիտ գիտությունները): Ռեալական ուսումնարանում, որ գործում էր 1906 թվականից, Անդրկովկասի առաջավոր ուսումնական հաստատություններից էր՝ համալրված բարձրագույն կրթությանը հմուտ մասնագետներով: Ռուսումնարանում երիշեն սովորում է 4 տարի, արժանանում ուսուցիչների ուշադրությանն ու համակրանքին:

Սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը: Ռուսաստանի հաղթանակը Թուրքիայի նկատմամբ հայ ժողովրդի ազատագրական փառասիրտ ոգևորություն է տալիս: Ռուսական բանակին օգնելու համար կամավորական ջոկատներ հավաքագրելու շարժում է սկսվում: Աշխարհի տարբեր ծայրերից պալաքվում էին տարբեր տարիքի մարդիկ՝ պատանիներ, տարեցներ, միավորվում կամավորական ջոկատների մեջ և ռուսական բանակի կազմում մասնակցում հայրենիքի ազատության համար մղվող մարտերին: Պատանի Զարենցը, համակված բուռն ոգևորությամբ, կամավորների շարքում մասնակցում է այդ մարտերին: Նրան մեծք տեսնում ենք 1915թ. Քանաքեռում կազմավորված կամավորական ջոկատների շարքում նախ՝ որպես սանիտար: Սակայն ամենայն հավանականությամբ Զարենցը խույս է տվել սանիտարի պարտականություններից և հայտնվել է առաջնագծում՝ դարավոր թշնամուց իր բաժին վրեժը լուծելու համար: 1915թ. վերջին և 1916թ. սկզբներին գումարտակը մարտերով անցել է Վանի շրջանից՝ ազատագրելով Նաբեկ, Աղթամար բնակավայրերը, մարտերով հասել մինչև Բիթլիս՝ ոտքով շրջելով Արևմտյան Հայաստանի տարածքի գրեթե կեսը:

Հայրենիքի համար սիրո զգացողությունն իր արտացոլումն է գտել «Կապուտայա Հայրենիք» պոեմում: Սակայն թուրքերից ազատագրված տարածքներում բանաստեղծը տեսնում էր աննկարագրելի բարբարոսության հետքեր, ավերածություններ, կոտորածներ, խոշտանգված անթաղ դիակներ՝ ծերերի, կանանց, երեխաների: Ինչ-ինչ պատճառներով սկսվում է ռուսական բանակի նահանջը: Այդ անհասկանալի հանելուկը բանաստեղծը յուրովի է հասկանում, այն է՝ սկսված այդ դաժան պատերազմից անակնկալներ սպասել պետք չէ, Հայրենիքի փրկության հույսը պատեց անթափանց շղարշով: Այս բոլորին Զարենցն անդրադարձավ

վաղ շրջանում գրած իր նշանավոր «Դանթեական առասպել» պոեմում, որտեղ հայ ժողովրդի ճակատագրի գեղարվեստական նկարագրությունը հասցված է համամարդկային հնչեղության:

1916թ. աշնանը մեկնում է Մոսկվա և մի կարճ ժամանակահատված հաճախում դարակզբից անուճ հանած Շանյավսկու համալսարանը՝ առաջին ժողովրդական համալսարանը Ռուսաստանում: Իսկ 1917թ. ընդունվում է գրական-գեղարվեստական ինստիտուտ, որը գլխավորում է Վ. Բրյուսովը: «Շատ էլ երկար չտևեցին մեր պարապմունքները Բրյուսովի ինստիտուտում, - գրել է Զարենցի հետ ինստիտուտ ընդունված Գ. Աբովը,- սկզբում հաճախում էինք եռանդուն ու հետաքրքրությամբ, բայց առարկաներից շատերը հեռու թվացին մեր հետաքրքրության շրջանակներից»: Բայց ահա կյանքի համալսարանը նա սովորեց գերազանց՝ բաց չթողնելով ոչ մի խորշ, ոչ մի խուփ:

Զարենցը Ռուսաստանում հասունացող հեղափոխության հետ մեծ հույսեր էր կապում: Պատահական չէր, որ մի սովորույթից մի փոքրիկ շեղում կատարեց, այն է՝ նոր գնած գրքի վրա, որ սովորույթի համաձայն գրում էր գնելու օրը, տարեթիվը, անուն-ազգանունը, հենց այդ օրերին գնած գրքի վրա այդ բոլորի հետ ավելացրեց նաև «փառքի օրը»: Դա մարտի 1-ն էր՝ ռուսական գաղի տապալման օրը: Հեղափոխությունը Զարենցի կյանքում բացում է նոր շրջան, իսկ այդ նոր շրջանը սկսվում է «Սոմա» պոեմով, որի վրա կար հեղինակային ուշադրավ մի վկայություն՝ «Գրված է Ցարիցին, 1917թ. հունիս-հուլիս, հեղափոխական կարմիր բանակում»: Նա կամավոր էր Կարմիր բանակում և երկիր Նաիրի փրկությունը կապում էր այդ բանակի հաղթանակների հետ: Հեղափոխության բուրքերից էր ծնունդ առել նաև «Ամբոխները խեղձարված» պոեմը: Ընթերցող հասարակությունը Զարենցին գիտեր և գնահատում էր որպես հեղափոխության երգիչ: «Զարենցը Հոկտեմբերյան սոցիալիստական էպոսայի ամենամեծ բանաստեղծն է հայ գրականության մեջ...», - գրել է Ավ. Իսահակյանը:

Ե՛ս՝ հասարակ ընթերցողու, հակված եմ գրական ստեղծագործությունը գնահատել գեղարվեստական արժանիքների տեսանկյունից՝ ուշադրություն դարձնելով տաղաչափական հնարքներին, ասելիքի սաստկությանը, ոճաբանական որոշակի մեթոդներին՝ անկասկա մրանք, թե դա որ ժամանակաշրջանին է վերաբերում, ում կամ ինչի մասին է, և ինչպես է դա ընկալվում, ասենք, գրականագետների կողմից:

Զարենցի ստեղծագործություններն էր տաղանդի անկեղծ գնահատողը, նույնպիսի անկեղծությամբ էլ թերություններն ու վրիպումները շեշտողը եղել է պետական ակադեմիկոս գործիչ, գեղարվեստական գրականության ընթացքին հետևող և ուղղորդող Ալ. Մյասնիկյանը: Զարենցի և Մյասնիկյանի առաջին համընկումը եղել է Մոսկվայում՝ 1922թ.: Հենց Մյասնիկյանի անմիջական նախաձեռնությամբ Մոսկվայում 1922թ. լույս տեսավ «Երկերի ժողովածու»-ի երկհատորյակը: Հենց Մյասնիկյանը կարողացավ լուծել Զարենցի արտասահմանյան ուղևորության դժվարին դարձը: «Կյանքում իմ համընկած մարդկանցից ամենամեծ տպավորությունը ինձ վրա թողել է Մյասնիկյանը,- գրել է Զարենցը,- բոլոր էպիտեմներից նրան սազական էր «բռնագածույլը», որը և ես կիրառել եմ նրա նկատմամբ»: Բանաստեղծի վրա ցնցող ազդեցություն թողեց Մյասնիկյանի ողբերգական մահը:

*Ել, բարձրացիր դազադից և կրկին երևա աշխարհին,*

*Աներեր բրոնզյա քո ձեռքով կրկին մեր ընթացքը վարիր,*

*Դու կոչված էիր լինելու ղեկավար երկրի ու դարի,-*

*Քեզ տրված էր ոսկյա մի բեկոր լեռնինյան վսեմ հանձարից:*

Իր դժվարին և փոթորկալից կյանքում Զարենցն ունեցել է շատ հակառակորդներ, որոնք, բնականաբար, չեն ընդունել նրա ինքնատիպ տաղանդը, շունդալից մուտքը գրական աշխարհի և փորձել են ամեն կերպ նսեմացնել նրան: Վաղուց գաղտնիք չէ «Երեքի

ղեկարացիա»-ի, «Էպիկական լուսաբաց»-ի, «Գիրք ճանապարհի»-ի շուրջ բարձրացրած աղմուկը: Խոսքն այստեղ վերաբերում է բանաստեղծի մեկ այլ «ախտայնի»՝ 20-ական թվականներին Լեռնային Ղարաբաղի պրոլետարողների ասոցիացիայի անդամ Շչեբրի-նին-Ներսիսյանին (նաև Աբխազիայի գրողների միության անդամ էր): Զարենցի հայտնի «Լեռնին ու Ալին» բալլադը (հիմքում ընկած են իրական դեպքեր) լույս տեսնելուց հետո նա նույն վերնագրով պոեմ է գրում (պոեմ՝ հեղինակի հորջորջմամբ): Այն թարգմանվում է ռուսերեն, հրատարակվում Սուխումիում 2000 տպաքանակով: Ժամանակն այդ ստեղծագործությունը դուրս է մղում գրական կյանքից, և քչերը կարող են իմանալ այդ մասին:

1932թ. գրական գործունեության 20-ամյակի կապակցությամբ գրողը հրատարակության է պատրաստում «Երկեր»-ի միահատորյակը: Կար խոսակցություն այդ տարեդարձը շուրջով նշելու մասին: Սակայն «Էպիկական լուսաբաց»-ի առիթով բանաստեղծի անվան շուրջ նորից աղմուկ է բարձրանում, և խափանվում ամեն ինչ: Գրականության և արվեստի թանգարանի Զարենցի ֆոնդում պահվում է «Երկեր»-ի՝ բանաստեղծի «սեփական օրինակը»: «Սեփական օրինակ» բառերը բանաստեղծն ինքն է գրել գրքի վրա 1933թ. օգոստոսի 10-ին: Այդ գրքի հետաքրքրությունը կայանում է նրանում, որ շապիկի երկրորդ և հաջորդ էջերին, նաև անվանաթերթին տարբեր ժամանակներում տարբեր գույնի թանաքով գրի են առնված բանաստեղծի տրամադրությունները, խոհերը, մտորումները, կենսագրական մանրամասները, հիասթափության պահեր: «Երկեր»-ի այս հատորում, իր համոզմամբ, նա ընդգրկել է այն բոլորը, ինչ համարում էր իր անցած ճանապարհի անկրկնելի նվաճումը: Մ. Մազմանյանը այդ գրքի մասին գրել է. «Նա միհատորյակից, որ պատրաստվում էր լույս ընծայել 1932թ., հանել էր «Կապուտայա հայրենիք»-ը, «Տաղարան»-ը, «Ծիածան»-ը, մինչև անգամ «Ես իմ անուշ Հայաստանի»-ն: Գրքի մի օրինակը նվիրելով Մազմանյանին՝ Զարենցը խոստովանել է. «Ձեռք եմ գործերս ու թողել այն, ինչ հարազատ է ինձ, ինչ կազմում է իմ ամբողջական գործի անբաժանելի մասը... Թող հիմա մի բան ասեն, եթե կարող են»: Պարզ է, խոսքն ուղղված էր իր հակառակորդներին: Իսկ հակառակորդներ նա միշտ ունեցել է: Եվ դիմում է բոլոր ժամանակներում էլ ամենամեծ քննադատին՝ ժողովրդին, եթե գիրքը վատն է, թող «թե՛ս անե՛ծքով» կործանեն բանաստեղծին, իսկ եթե այն լավն է, թող գնահատեն սերունդները:

*...Սերունդները թող թքեն դեմքին նրա,*  
*Որ կործանել էր փորձում գործն այս հուրորան...»*

Ժամանակակիցները, բոլոր նրան ճանաչողները պատմում են, թե ինչպիսի մեծ սիրով էր կապված ընտանիքին: Բայց, ինչպես ասում են, այստեղ էլ նրա կյանքը սովորական հուսմով չգնաց: 1927թ. նոր տարվա գիշերը մահացավ կինը՝ Արփիկը: Կնոջ մահը շատ ծանր տարավ, երկար ժամանակ ուշքի չէր գալիս: Այնուհանդերձ, ստիպված ամուսնացավ երկրորդ անգամ՝ 1931թ. Իզաբելա Նիյազյանի հետ: Մեկ տարի հետո ծնվում է դուստրը, որին կոչում է Արփենիկ: Արփիկը հետագայում աշխատել է բանաստեղծի տուն-թանգարանում՝ որպես գիտաշխատող: Երկրորդ դուստրը ծնվել է 1935թ.: Նրան անվանել է Անահիտ: Անահիտը աշխատել է Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում և պաշտպանել թեկնածուական ատենախոսություն «Զարենցի ստեղծագործության վերջին շրջանը» թեմայով: Զարենցը շատ էր ուզում տղա ունենալ և անունը Կոմիտաս դնել: Ծակատագիրն այստեղ էլ է թեք գնում:

1932թ. լույս տեսած «Երկեր»-ը (որի մասին խոսվել է) բանաստեղծը ծոնում է ավագ դասերը՝ Արփիկին: Հենց առաջին բանաստեղծությունն էլ ունի «Արփիկին» վերնագիրը:

*Երբ մեծանաս, կարդա այս գիրքը, իմ անգին,*

*Որ հասկանաս խնդությունը իմ կյանքի: Որ իմանաս, թե ինչով եմ եղել ես Իմ օրերում թե՛ ինքնուրույն և թե՛ մեծ*

*Գլխավորը սա է, մանկիկ իմ լուսե,- Մնացածը միայն լեզունդ է մի սև...»*

Զարենցն ամբողջ հոգով զգում էր այն մղձավանջը, որ պատել էր երկիրը, զգում էր նաև իր անձի շուրջ կուտակվող ամպերը, բայց և զգում էր ու գիտակցում այն դերը, որ պատմությունն էր որոշել իր համար՝ որպես Նորագույն գրականության առաջամարտիկ:

*Բայց օրերում իմ հուրորան աշխարհ էր նոր ծնված հինգ,-*

*Եվ մեծ եմ ես, քանզի ինձ մեծ երթ էր նշված պատմությունից...»*

Բանաստեղծի ըմբոստ ոգու պոթկույնը գապելու համար նրան բանտարկեցին: Թվագրված վերջին գործը «Ավ. Իսահակյանին» բանաստեղծությունն է: Ի դեպ, Վարպետի հետ ծանոթացել էր դեռևս 1925թ. արտասահմանյան ուղևորության ժամանակ՝ Վենետիկում և խորին հարգանքով ու սիրով էր վերաբերվում նրա անձին ու վաստակին: «Սիրելի՛ Ավետիք, փողոցում երգում էին քո երգը, սիրտս լցվեց, և զրեցի հետևյալ ստիխը, ընդունիր իբրև ծոն և ողջուն»։ Այն ուղարկվել էր կնոջը, և նա էլ հանձնել է Իսահակյանին:

*Մի, կուզեի ես ունենալ գոնե մի երգ այնքան ջերմին,*

*Որ գրեի խուրդս որմին, և նա հավետ այնտեղ մնար:*

*Եվ սերունդներ այսպես գային և կարդային խուրդս որմին*

*Սիրտս միակ երգը ջերմին, և երգս այդ ես քեզ տայի:*

Այս վերջին ոտանավորում անգամ բանաստեղծը խորհում էր իր չգրված ամենավաղ երգի մասին:

Արդեն 30-ական թվականների սկզբից բանաստեղծը հոգու խորքում զգում էր մահվան սառը քամու շունչը, որ պտտվում էր իր շուրջը՝ օր օրի սաստկանալով: Որպես մի գարնանալի կանխագուշակ՝ իր հայացքի առաջ տեսնում էր մահվան, նույնիսկ թաղում հանգամանքները: Այս մասին անդրադարձել է «Ամբոխագիր» բանաստեղծության մեջ: Ստեղծագործության մեջ նկարագրված է «ողորմելի, անօգ, ինքնամոխի» մի թաղում, անշուք սայլակ ու անշուք մի դազաղ՝ ծածկված «ողորմելի... ծաղիկներով և դաշտերի ձրի կանաչով», «հին սայլակի հետևից հագիվ քայլող յոթ-ութ արհեստավոր, արևելյան խղճուկ նվազախմբի մահվան քայլերգով...»:

Նրա կյանքի վերջին շրջանը շատ ավելի ծանր էր, քան կարելի է նկարագրել. անհատի պաշտամունքի սաստկացում, կամայականությունների շրջանակի ընդլայնում, անբավարարության ճահճի խորացում. այսպիսի մթնոլորտը շատ ավելի ծանր էր ու անտանելի: Այդ ծանր պահերին անգամ Զարենցը մնաց միշտ մեծ՝ հավատարիմ բանաստեղծ-քաղաքացու խիզախ կերպարին: Այդ օրերին, երբ տնային կալանքի ենթարկված իր գրչակից բարեկամ Ավ. Բակունցի նկատմամբ մամուլը լցված էր ստահող, գրպարտիչ հողվածներով, Զարենցը, հավատալով Բակունցի անմեղությունը, նրան ծոնեց նորաքանչ մի բանաստեղծություն և եղբայրության ձեռք մեկնեց:

*Այս ամենի համար,- և քո եղբրական Տառապանքի համար, որ արդ կրկին Վեհություն է խառնում քո անադարտ երգին -*

*Ես քեզ պարզում եմ ձեռք եղբայրության...»*

Զարենցն ապրեց կարճատև, բայց փոթորկուն կյանքով, թողեց հարուստ գրական ժառանգություն:

«Թույլ տուր, Զարենց, հենվել քեզ վրա»։ Եվտուլենկոյի այս խոստովանությանը հետևել են սերունդներ և, հենվելով չարենցյան հարուստ գրական ժառանգության վրա, ինչպես կենսարար աղբյուր՝ ընկել են իրենց բաժինը ու քայլել առաջ:

Զարենցյան պատգամներն ուղեկցել են մեր ժողովրդին դեպի ապագան տանող դժվարին ճանապարհին: Այսօր էլ քան երբևիցե, մենք պարտավոր ենք սերտել և վերստին սերտել նրա՝ «Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» մարգարեական պատգամը, այն դարձնել փարոս, դարձնել դրոշակ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՑԱՆԿ

2020Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ ԱՐԲԵՉԱՆԻ ՍԱՆՁԱՉԵՐԾԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԹՇՆԱՄՈՒ ՎԵՐԱՀԱՅՈՒՄՈՒԹՅԱՆ ՏԱԿ ՄԵԱՅԱԾ ՀՈՒՇԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱՍԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԿՈՐՅՐԱԾ ԴԻՊԼՈՄՆԵՐԻ

	Մասնագիտությունը	Ավարտման թիվը	Գրանցման համար	Դիպլոմի համարը	Պետական քննական հանձնաժողովի որոշման օրը	Որակավորում	Շրջանավարտի անուն, ազգանուն, հայրանուն
Բակլավրիատ							
1	Ագր.արտ.տնտես.և կառավարում	2009	82	AD 073785	01.06.2009	տնտեսագետի	Բաղդյան Էրիկ Կարենի
2	Ագրոնոմիա	2009	71	AD 073774	25.05.2009	գյուղատնտեսի	Համբարձումյան Սասուն Վալերիի
3	Ագրոնոմիա	2009	39	AB 063084	25.05.2009	գյուղատնտեսության	Գրիգորյան Նելսոն Ռոբիկի
4	Ագրոնոմիա	2009	28	գերազանց AB 061771	25.05.2009	գյուղատնտեսության	Շինդյան Սուրեն Մխիթարի
5	Անասնաբուժություն	2009	19	AB 063065	26.05.2009	անասնաբույժ-բժիշկ	Հայրիյան Աշոտ Արտյուշայի
6	Ագր.արտ.էկ.և կառ.	2010	35	AB 083862	20.05.2010	տնտեսագիտության	Մայիլյան Կարինե Նիկոլայի
7	Անասնաբուժություն	2011	1	գերազանց AB 103432	28.01.2011	գյուղատնտեսության	Աբրահամյան Նինա Լևոնի
8	Ագրոնոմիա	2012	38	AB 135322	24.05.2012	անասնաբույժ-բժիշկ	Մուսայեյան Արթուր Վլադիմիրի
9	Ագրոնոմիա	2013	43	AB 158258	03.06.2013	գյուղատնտեսության	Մնացականյան Արեգ Վարչամի
10	Անասնաբուժություն	2013	23	AB 158238	04.06.2013	անասնաբուժական սանիտարական փորձաքննության	Ղահրամանյան Եղիշե Ռոմայի
11	Գյուղ.մեքենայացում	2013	83	AB 158297	27.05.2013	գյուղատնտեսության	Մայիլյան Արման Կամոյի
12	ԱՊՀ ֆին կառավարում	2014	29	AB 181894	29.04.2014	տնտեսագիտության	Վարդանյան Աշոտ Արտյուշայի
13	Ագր արտ. էկ և կառավարում	2015	53	AB 182278	24.02.2015	տնտեսագիտության	Գրիգորյան Նանար Բենիկի
14	Ագր.արտ. էկ և կառ.	2015	58	AB 182283	24.02.2015	տնտեսագիտության	Պետրոսյան Արսեն Կամոյի
15	Ագրոնոմիա	2015	82	AB 205064	21.04.2015	գյուղատնտեսության	Վարդանյան Դիանա Մանվելի
16	Գյուղ.մեքենայացում	2015	31	AB 182257	19.02.2015	տեխնիկի և տեխնոլոգիայի	Ղարամյան Սևակ Սլավիկի
17	Փոխ.և ճան.երթ.կազմ.և կառ	2015	49	AB 182275	18.02.2015	տեխնիկի և տեխնոլոգիայի	Պետրոսյան Սևակ Հենրիխի
18	Ագր.արտ.էկ.և կառ.	2016	64	AB 205890	24.02.2016	տնտեսագիտության	Զիլայանց Արմեն Սամվելի
19	Ան.սան.փորձ	2016	26	AB 205852	25.02.2016	անասնաբուժական սանիտարական փորձաքննության	Միրզոյան Ռոման Վալերիի
20	ԱՊՀ հաշվ.հաշվ.և աուդիտ	2016	86	AB 205912	26.02.2016	տնտեսագիտության	Մարգարյան Վաչագան Վաչագանի
21	Գյուղ.մեքենայացում	2016	32	AB 205858	19.02.2016	տեխնիկի և տեխնոլոգիայի	Կարապետյան Արթուր Կարապետի
22	Հող.և հող կադաստր	2016	44	AB 205870	17.02.2016	տեխնիկի և տեխնոլոգիայի	Հախանդարյան Գևորգ Կարենի
23	Ագրոնոմիա	2016	2	AB 205828	22.02.2016	գյուղատնտեսության	Ալեքսանյան Կրեմ Միսակի
24	Ագր արտ. էկ և կառավարում	2017	103	AB 240112	27.04.2017	տնտեսագիտության	Ասկարյան Տաթև Գարիկի
25	Ագրոէկոլոգիա	2017	80	AB 240174	26.04.2017	գյուղատնտեսության	Իսանյան Մարիամ Սերգեյի
26	Ան.սան.փորձ	2017	8	AB 220586	24.02.2017	անասնաբուժական սանիտարական փորձաքննության	Շեկյան Կրեմ Հովսեփի
27	ԱՊՀ ֆին կառավարում	2017	53	AB 220629	22.02.2017	տնտեսագիտության	Գյուրջինյան Վահրամ Սամվելի
28	Հող.և հող կադաստր	2017	145	AB 240142	28.04.2017	տեխնիկի և տեխնոլոգիայի	Ասրիյան Վահրամ Սուրենի
29	Հող.և հող կադաստր	2017	50	AB 220626	14.02.2017	տեխնիկի և տեխնոլոգիայի	Սարգսյան Հովիկ Ժիրայրի
30	Անասն. սան. փորձաքնն.		7	AB 220585	24.02.2017	անասնաբուժական սանիտարական փորձաքննության	Գրիգորյան Գասպար Արարատի
31	Ագրոնոմիա	2018	11	AB 240807	22.02.2018	գյուղատնտեսության	Մեհոսեթյան Գոռո Վառենի
32	Ան.սան.փորձ.	2018	15	գերազանց AB 211174	28.02.2018	անասնաբուժական սանիտարական փորձաքննության	Աբաղյան Անդրեաս Կարոյի
33	ԱՊՀ ֆին կառավարում	2018	72	AB 240867	26.02.2018	տնտեսագիտության	Ասատրյան Մարիամ Ավազիկի
34	Հող.և հող կադաստր	2018	38	AB 240833	16.02.2018	տեխնիկայի և տեխնոլոգիայի	Ավանեսյան Լուսինե Կամոյի
35	Փոխ.և ճան.երթ.կազմ.և կառ	2018	30	AB 240825	19.02.2018	տեխնիկայի և տեխնոլոգիայի	Բալասանյան Թաթև Հայասերի
36	ԱՊՀ հաշվ.հաշվ.և աուդիտ	2018	56	AB 240851	27.02.2018	տնտեսագիտության	Բաղասյան Կրեմ Վահանի
37	Ագր արտ. էկ և կառավարում	2019	21	AB 263289	25.02.2019	տնտեսագիտության	Ասրյան Տաթևիկ Էդիկի
38	Ագր արտ. էկ և կառավարում	2019	102	AB 263365	19.04.2019	տնտեսագիտության	Հովսեփյան Վահրամ Սուրենի
39	Ագր արտ.էկ և կառավարում	2019	96	AB 263359	19.04.2019	տնտեսագիտության	Աբրահամյան Էդիտա Մուրադի
40	Ագր.արտադր.էկոնոմիկա և կառավարում	2019	24	AB 263292	25.02.2019	տնտեսագիտության	Գասպարյան Համլետ Արարատի
41	Ան.սան.փորձ	2019	9	AB 263278	19.02.2019	անասնաբուժական սանիտարական փորձաքննության	Առուշանյան Նվեր Սուրենի
42	Ան.սան.փորձ	2019	15	AB 263284	19.02.2019	անասնաբուժական սանիտարական փորձաքննության	Սահակյան Արմին Արվիկի
43	Ան.սան.փորձ	2019	10	AB 263279	19.02.2019	անասնաբուժական սանիտարական փորձաքննության	Բաղդասարյան Սամվել Սուրենի
44	Ան.սան.փորձ.	2019	14	AB 263283		անասնաբուժական սանիտարական փորձաքննության	Պետրոսյան Վոլոդյա Խաչիկի
45	Անասնաբուժություն	2019	143	AB 263395	19.02.2019	անասնաբույժ բժիշկ	Սարուխանյան Մայրլ Սամվելի

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

46	Անասնաբուժություն	2019	140	AB 263392	30.05.2019	անասնաբույժ բժիշկ	Մեծույան Զնարիկ Սարգիսի
47	Անասնաբուժություն	2019	141	AB 263393	30.05.2019	անասնաբույժ բժիշկ	Նավասարդյան Իվան Հովհիկի
48	ԱՊՀ հաշվ.հաշվ.և աուդիտ	2019	35	AB 263302	26.02.2019	տնտեսագիտության	Ավագույան Մելանյա Արտյուշի
49	ԱՊՀ հաշվ.հաշվ.և աուդիտ	2019	110	AB 263370	25.04.2019	տնտեսագիտության	Բաղայան Էլեն Կարենի
50	ԱՊՀ հաշվ.հաշվ.և աուդիտ	2019	33	AB 263300	26.02.2019	տնտեսագիտության	Այդինյա Ռոբսանա Միխայիլի
51	ԱՊՀ ֆինանսների կառավարում	2019	47	AB263314	27.02.2019	տնտեսագիտության	Ավագյան Անի Հայկի
52	ԱՊՀ ֆինանսների կառավարում	2019	53	AB 263320	27.02.2019	տնտեսագիտության	Պողոսյան Ինեսսա Վիտալիի
53	ԱՊՀ ֆինանսների կառավարում	2019	49	AB 263316	27.02.2019	տնտեսագիտության	Գասպարյան Արշակ Արթուրի
54	ԱՊՀ ֆինանսների կառավարում	2019	54	AB 263321	28.02.2019	տնտեսագիտության	Սարգսյան Գևորգ Սամվելի
55	Հող-և հող կադաստր	2019	94	AB 263358	29.04.2019	տեխնիկայի և տեխնոլոգիայի	Սարգսյան Միքայիլ Վալերիի
56	Փոխ.և ճան.երթ.կազմ.և կառ.	2019	61	AB 263328	21.02.2019	տեխնիկայի և տեխնոլոգիայի	Պետրոսյան Օլեգ Վովայի
57	Փոխ.և ճան.երթ.կազմ.և կառ.	2019	85	AB 263349	30.04.2019	տեխնիկայի և տեխնոլոգիայի	Հովհաննիսյան Գենարի Տոլիկի
58	Փոխ.և ճան.երթ.կազմ.և կառ.	2019	57	AB 263324	21.02.2019	տեխնիկայի և տեխնոլոգիայի	Բաղդասարյան Կիմ Ալեքսանդրի

**Մագիստրատուրա**

1	Անասնաբուժություն	2013	20	գերազանց AM 033799	04.06.2013	անասնաբույժ բժիշկ	Աբրահամյան Նինա Լևոնի
2	Անասնաբուժություն	2015	22	AM 047097	29.05.2015	անասնաբույժ բժիշկ	Ղահրամանյան Եղիշե Ռոմայի

**ՄԱԿԾՎ**

1	Էկոնոմիկա, հաշվ.հաշվ.և աուդիտ	2010	48	AK 083720	22.10.2010	հաշվապահի	Խաչատրյան Արմեն Ռուդիկի
2	Փոխադրում. կառավ. և կազմ. Տրանսպորտում	2010	74	AK083746	22.11.2010	կրտսեր ճարտարագետի	Մանայան Մխիթար Յուրիի
3	Էկոնոմիկա, հաշվ.հաշվ.և աուդիտ	2012	13	AK 093618	22.05.2012	հաշվապահի	Մայիլյան Կամո Խաչատուրի
4	Էկոնոմիկա, հաշվ.հաշվ.և աուդիտ	2012	56	AK 102000	28.06.2012	հաշվապահի	Սկրտույան Վաչագավ Սոսի
5	Էկոնոմիկա, հաշվ.հաշվ.և աուդիտ	2012	7	AK 093612	22.05.2012	հաշվապահի	Ավանեսյան Աղավնիկ Սուրենի
6	Էկոնոմիկա, հաշվ.հաշվ.և աուդիտ	2012	8	AK 093613	22.05.2012	հաշվապահի	Բալասանյան Կարո Մուրադի
7	Գյուղատնտեսագիտություն	2013	64	AK 113307	28.06.2013	գյուղատնտեսի	Մուսայեյան Դավիթ Սերգեյի
8	Ֆինանսներ	2013	38	AK 113265	12.06.2013	տնտեսագետ-ֆինանսիստի	Ավանեսյան Ռուդոլֆ Ռուդոլֆի
9	Էկոնոմիկա, հաշվ.հաշվ.և աուդիտ	2014	48	AK 120615	29.05.2014	հաշվապահի	Գրիգորյան Արմեն Հրայրի
10	Էկոնոմիկա, հաշվ.հաշվ.և աուդիտ	2014	50	AK 120617	29.05.2014	հաշվապահի	Եղիզարյան Դավիթ Մուշեղի
11	Էկոնոմիկա, հաշվ.հաշվ.և աուդիտ	2014	111	AK 120805	25.06.2014	հաշվապահի	Գրիգորյան Հրայր Հովհիկի
12	Ֆինանսներ	2014	64	AK 120631	23.05.2014	տնտեսագետ-ֆինանսիստի	Բարսեղյան Էդվին Դավիթի
13	Ֆինանսներ	2014	150	AK 120842	23.06.2014	ֆինանսիստի	Պետրոսյան Ալեն Գագիկի
14	Գյուղ.մեքենայացում	2015	77	AK 129447	03.07.2015	տեխնիկի	Համբարձումյան Էրիկ Լևոնի
15	Գյուղատնտեսագիտություն	2015	106	AK 129476	06.07.2015	գյուղատնտեսի	Սահակյան Արմեն Ալեքսանդրի
16	Էկոնոմիկա, հաշվ.հաշվ.և աուդիտ	2015	150	AK 129515	24.06.2015	հաշվապահի	Խաչատրյան Կարեն Յուրիի
17	Մենեջմենթ	2015	123	AK 129493	25.06.2015	կառավարչի (մենեջերի)	Գրիգորյան Մարատ Արայիկի
18	Մենեջմենթ	2015	133	AK 129503	25.06.2015	կառավարչի (մենեջերի)	Մախոսյան Արտյոմ Սամվելի
19	Փոխադր. Կազմ. և կառ.	2015	87	AK 129457	02.07.2015	տեխնիկի	Գրիգորյան Սասուն Դավիթի
20	Փոխադր. Կազմ. և կառ.	2015	10	AK 120943	26.02.2015	տեխնիկի	Խաչատրյան Դավիթ Անդրանիկի
21	Փոխադր. Կազմ. և կառ.	2015	84	AK 129454	02.07.2015	տեխնիկի	Բեգարյան Ռուդոլֆ Արտյոմի
22	Փոխադր.կազմ. և կառ. Տրանսպորտում	2015	3	AK 120936	26.02.2015	տեխնիկի	Աթայան Արթուր Հովհաննեսի
23	Ֆինանսներ	2015	185	AK 129546	23.06.2015	ֆինանսիստի	Յաղոբյան Մարատ Վաչեսլավի
24	Ֆինանսներ	2015	178	AK 129539	23.06.2015	ֆինանսիստի	Հայրապետյան Տիգրան Արսենի
25	Ֆինանսներ	2015	172	AK 129533	23.06.2015	ֆինանսիստի	Բաղդասարյան Սարգիս Սլավիկի
26	Անասնաբուժություն	2016	34	AK 138264	03.06.2016	անասնաբույժի	Ղասույան Ռոբերտ Սամվելի
27	Ապրանքագիտություն	2016	163	AK 138490	28.06.2016	ապրանքագետի	Հովսեփյան Գենարի Արթուրի
28	Գյուղ.մեքենայացում	2016	170	AK 138497	30.06.2016	ճարտարագետի	Դանիելյան Կարեն Քաջիկի
29	Էկոնոմիկա, հաշվ.հաշվ.և աուդիտ	2016	227	AK 138545	24.06.2016	հաշվապահի	Համբարձումյան Դավիթ Մխիթարի
30	Էկոնոմիկա, հաշվ.հաշվ.և աուդիտ	2016	210	գերազանց AK 140987	24.06.2016	հաշվապահի	Հովհաննիսյան Մարատ Մուխանի
31	Էկոնոմիկա, հաշվ.հաշվ.և աուդիտ	2016	224	AK 138542	24.06.2016	հաշվապահի	Դոլուխանյան Վաղիմիր Վարդանի
32	Մենեջմենթ	2016	188	AK 138513	22.06.2016	կառավարչի (մենեջերի)	Բաղդասարյան Էլինա Շահենի
33	Մենեջմենթ	2016	202	AK 138527	22.06.2016	կառավարչի (մենեջերի)	Հարությունյան Արթուր Լևոնի
34	Փոխադր. Կազմ. և կառ.	2016	101	AK 129693	15.06.2016	տեխնիկի	Կապյան Ֆրեյդուն Յուրայի
35	Փոխադր. Կազմ. և կառ.	2016	4	AK 129592	29.02.2016	տեխնիկի	Ավանյան Արայիկ Լևոնի
36	Ֆինանսներ	2016	234	գերազանց AK 140992	23.06.2016	ֆինանսիստի	Ավագյան Դավիթ Հակոբի
37	Փոխադրում, կազմ. և կառավ.	2016	10	AK129598	29.02.2016	տեխնիկի	Հակոբյան Անդրանիկ Ռոբերտի
38	Անասնաբուժություն	2017	60	գերազանց AK 149813	19.06.2017	անասնաբույժի	Սարգսյան Նարեկ Արայիկի
39	Էկոնոմիկա, հաշվ.հաշվ.և աուդիտ	2017	112	AK 143443	29.06.2017	հաշվապահի	Ասրյան Ալբերտո Նվերի
40	Մենեջմենթ	2017	127	գերազանց AK 149824	28.06.2017	կառավարչի (մենեջերի)	Դանիելյան Իլոնա Հրաչի
41	Մենեջմենթ	2017	138	AK 143465	28.06.2017	կառավարչի (մենեջերի)	Բաղդյան Հոնհաննես Միքայելի
42	Մենեջմենթ	2017	129	գերազանց AK 149826	28.06.2017	կառավարչի (մենեջերի)	Խաչատրյան Աննա Վանյայի
43	Մենեջմենթ	2017	128	գերազանց AK 149825	28.06.2017	կառավարչի (մենեջերի)	Դոլուխանյան Քրիստինա Վազգենի

ՄՊՍԿԻ ԹԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՄՊՍԿ-Ն ԱՅՆՏԵՐ Է, ՈՐՏԵՐ ՀԱՊՐՈՒԹՅՈՒՆ Ե ԵՎ` ՀԱԿԱՌԱԿՈՒ

Հաղորդի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի (ՄՊՍԿ) մասին 44-օրյա պատերազմից առաջ էլ շատերը գիտեին, բայց պատերազմից հետո առավել շատերն իմացան: Հաղորդը թշնամու կողմից օկուպացվելու հետևանքով ՄՊՍԿ-ն պատերազմի դադարից անմիջապես հետո սկսեց գործել Երևանում, որտեղ ապաստանել էին հաղորդից հեռավոր: Կարճ ժամանակում այն վերակազմավորվեց՝ իր շուրջը համախմբելով հայրենակիցներին: Նրա մասնաճյուղերը բացվեցին Էջմիածնում, Մասիսում, Վանաձորում, Արտաշատում, Աշտարակում, Եղեգնաձորում, որտեղ տեղահանված հաղորդից հեռավոր կան: Եվ մշակութային կրթություն իրականացնող այս փոքրիկ հիմնարկի շնորհիվ Հաղորդի անունը միշտ բարձր հնչում է: Չափազանցություն չլինի սակայն, որ այն այսօր դարձել է Հաղորդի խորհրդանիշը:

Մտտ հինգ ամիս առաջ Հաղորդի ՄՊՍԿ-ն սկսեց գործել նաև Ստեփանակերտում: Կենտրոնի նոր առաջխաղացումը պայմանավորված է մանկավարժական, աշակերտական համերաշխ և կուռ կոլեկտիվի, ծնողական հասարակության՝ Դիզակ աշխարհի նախընտրված, բարբառը կենդանի ու վառ պահելու, հայրենի օջախ վերադառնալու հեռանկարի հավատով, կրթամշակութային հաստատության տնօրինության անդադրում ջանքերի և խելացի դեկավարմանը:



Այս ամենի շուրջ գրույց ունեցանք Կենտրոնի տնօրեն Իրա Թամրազյանի հետ: Դեռ անցյալ տարվա սեպտեմբերին պետք է Ստեփանակերտում գործեր Հաղորդի ՄՊՍԿ-ն: Դա տնօրինության նպատակն էր, բայց դժվարություններ այն էր, որ տարածք պետք է գտնեին, որը չի հաջողվել: Եվ երբ Ստեփանակերտում «Պոլ էլյուարի տուն» ֆրանկոֆոնիայի կենտրոնը»-ի բացումը եղավ, ու ինքը հեռախոսով ծանուցեցավ նրա տնօրեն Մարիաննա Աբրահամյանի հետ և խնդրեց սենյակ տրամադրել՝ բացատրելով, որ Կենտրոնի 6 խմբակավարներ իրենց ընտանիքներով տեղափոխվել են Արցախ, դրանից բացի 15 ընտանիք էլ իրենց անդամներով՝ 70-80 մարդ, ուզում են վերադառնալ, ու որպեսզի նրանք և իրենց աշխատանքը չկորցնեն, և՛ երեխաներին հավաքագրեն, դա անհրաժեշտ է: Ու նա մեծ սիրով ընդառնեց: Մեր գրույցն այստեղից սկսեց Իրա Թամրազյանը: Հովանավորների միջոցով նյութեր հայթայթելով՝ Կենտրոնը սկսեց և այստեղ իր խմբակների գործունեությունը: Ու թվարկում է, թե որ խմբակներից ու քանի աշակերտով են սկսվել: Պարի խմբակը 25 հոգանոց է, մյուսներում՝ ուլունքագործություն, նկարչություն, ասեղնագործություն, 8-10 աշակերտ կա: Խնցեգործությունն այստեղ դեռ չունեն, քանի որ Երևանում էլ են մոր բացել, մասնագետներ է ուղարկել, որ այնտեղ վարպետանան: «Երևանում մեր գործունեության մի ուղղություն էլ այն է, որ պատրաստենք նոր մաս-

նագետներ: Բոլոր մասնագիտություններով ունենք վարպետներ, բայց Երևանում լինելն օգնեց, որ նրանք ավելի կատարելագործվեն»: Ու պարզաբանում է. օրինակ՝ կարպետագործության մեկ ուրիշ ձև էլ կա, և հաղորդից կարպետագործները «Հանգույց» հիմնադրամում ուսումնասիրել են, ու հիմա կարողանում են այս երկրորդ ձևն էլ գործել: Նույնն էլ՝ գորգագործության բնագավառում: Ուզում են մետաքսե ռել են այն, ինչ ինձնից է կախված, և իրենք էլ արել են այն, ինչ իրենցից է կախված որպես խմբակավարներ: Ինչ նյութեր ձեռք ենք բերել այդ պահին, այդ խմբակն էլ բացել ենք»: Ու թվարկում է այդ ճանապարհին իրենց ձեռք մեկնած բոլոր լավ մարդկանց անունները: Առաջինը մշտն է Երևանում ԱՀ տեղեկատվական շտաբի ղեկավար Միքայել Վիրաբյանին, որը տարածք տրամադրեց շտաբում, և Փետրվարի 20-ին՝ Արցախի վերածննդի օրը, առաջին ցուցահանդեսի կազմակերպեցին: Կենտրոնի տեղը իմացավ երաժիշտ, կոմպոզիտոր Արա Գևորգյանը, որը, լինելով այդտեղ, հաջորդ օրը ներկայացավ նկարչական նյութերով լի երկու մեծ տուպակներով, ու այդպես բացվել է նկարչական խմբակը: Կարճ ժամանակ անց նրա միջոցով Մոսկվա ցուցահանդեսի են ուղարկում երեխաների նկարչական և ձեռքի աշխատանքները: Արձագանքը չի ուշանում. այնտեղ էլ գտնվել են հովանավորներ հայ համայնքից: Եթե գրեցին և ուլունքագործություն են անում, ուրեմն այդ գործերը պետք է դրվեն փայտե շրջանակների մեջ: Արա Գևորգյանն օգնեց փայտի հաստոց ձեռք բերել, որով էլ և փայտամշակման խմբակը գործարկվեց, և դրա շնորհիվ՝ նաև շրջանակներն ապահովվեցին: Իմանալով, որ ԱՀ ԿԳՄՍՆ-ն գորգարվեստի մրցույթ է կազմակերպում, դիմեցին ԱՀ նախագահի՝ սփյուռքի հարցերով հանձնակատար Ազատուհի Սիմոնյանին, որն էլ հովանավորների միջոցով գորգագործական մեծ հաստոց տրամադրեց Կենտրոնին: Կարպետների համար իրենք ունեին փոքր հաստոցներ փայտից սարքած: Այդպես մասնակցեցին մրցույթին՝ ներկայացնելով 22 աշխատանք, որից 12-ը մրցանակային տեղ գրավեց:

Կենտրոնի երեխաների ձեռքի աշխատանքների ցուցահանդեսները շարունակվել են նաև արտերկրում՝ ԱՄՆ, Ֆրանսիա, Շվեյցարիա, Բելգիա: Մեծ պահանջարկ են վայելում Հաղորդի բնապատկերներին նվիրված նկարները: Բելգիայում այդ թեմայով նաև կոնֆերանս է կազմակերպվել: ՄՊՍԿ-ն ակամայից դարձել է Հաղորդի և առասպառակ Արցախի ճանաչելիությանը նպաստող կենտրոն:

Այսօր Հաղորդի ՄՊՍԿ-ն Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում սեփական տարածք է ձեռք բերել: Մինչև պատերազմը ինչքան խմբակներ կային՝ 39 հատ, հիմա էլ գործում են, բացի հրթիռահարված խմբակից: Ըստ տնօրենի՝ ամենաուշը ապրիլի սկզբին դա էլ կվերականգնեն: «Մեզ կոչում են Հաղորդի փոքրիկ կղզի Երևանում: ՄՊՍԿ-ն ցուցանող՝ Կենտրոնի ծակատամասում տեղադրված պատատիրն նաև Հաղորդի եկեղեցու նկարն է: Հավաքվելով դրա տակ՝ հաղորդիցիները խաչակերպում են. «Հաշվենք, որ գնացել ենք մեր եկեղեցին».- ասում են: Այդքան հուրազատ վայր է դա նրանց համար»,-

պատմում է Իրա Թամրազյանը: ՄՊՍԿ-ի գործունեությունը միայն երեխաներին հմտություններ սովորեցնելով չի սահմանափակվում: Ֆրանսիական քրիստոնեական կազմակերպությունը այնքան բարձր է գնահատել Կենտրոնի աշխատանքը, որ միլիոն է կարի արտադրամասի մեքենաներ: Ի. Թամրազյանը նպատակ ունի հաղորդից և, ընդհանրապես, մյուս շրջաններից տեղահանված կանանց աշխատանքով ապահովելու համար կարի արտադրամաս բացել հազուստի մոդելավորման խմբակին կից: Պատվիրատուներ արդեն ունեն Իսրայելից, Ֆրանսիայից:

Կազմագործությանն են ուզում մեծ զարկ տալ: Երևանում արդեն գործում է այդ խմբակը, բայց թրծման վառարան չունեն, որպեսզի երեխաները կավե ամանները ջնարակեն: «Եղեգնաձորում ունենք շատ հաղորդիցիներ, և այնտեղ կա լավ կահավորված հաստոցներով կավագործության արտադրամաս: Իմ նպատակն է, որ այդ արտադրամասն աշխատի ու Հաղորդի մեր գորգարված սպաները, որ այսօր այնտեղ են, մասնագիտանան կավագործության մեջ, որ հետագայում, երբ վերադառնանք, ունենանք կավագործության վարպետներ», - հերթական պլանն է ներկայացնում Ի. Թամրազյանը: Այս ուղղությամբ տնօրենի մի շահագրգռվածությունն էլ այն է, որ Եղեգնաձորում պանրի 150 հազար կավե ամանների պահանջարկ կա և իրենց են պատվիրել պատրաստել:

Բացի բուն գործունեությունից, Կենտրոնը հավաքել է Հաղորդի ավելի քան հազար բնակչի ընտանիքների պատմությունը, թե ինչ ունեցվածք են ունեցել, ինչ են կորցրել և այդ փաստաթղթերը 140 տեսանյութի հետ ուղարկել Եվրոպայում: Ժամանակ առ ժամանակ այնտեղից հարցում են անում իրենց, նշանակում է՝ հետաքրքրվում են:

Փաստորեն Հաղորդի ՄՊՍԿ-ն աշխատում է առնվազն երեք ուղղությամբ. երեխաներին հմտություններ է տալիս աշխատատեղեր է ստեղծում, կատարում է հասարակական-քաղաքական առաքելություն:

ՄՊՍԿ-ի նպատակը ամբողջությամբ Արցախ վերադառնալն է: Դրա համար պետք է ունենան սեփական շենք, ապահովված լինեն բնակարաններով: Մեկ այլ երազանքի մասին էլ արտահայտվեց ՄՊՍԿ տնօրենը: Ուզում են վերականգնել Հաղորդի կղզին: «Դա մեր պապական, տեղական տանիքներն են, շատ գեղեցիկ են ու ազգային»:

Իսկ այս օրերին պատրաստվում են Ֆրանկոֆոնիայի օրվան նվիրված միջոցառմանը, որին ամեն տարի ՄՊՍԿ-ն մասնակցելիս է եղել: Դա կլինի և՛ ձեռքի աշխատանքների ցուցահանդեսի ձևով, և՛ համերգային փոքրիկ ծրագրով: Խմբակավարներն ու երեխաներն աշխատում են ֆրանսիական թեմաների վրա:

Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՑԱՆԿ

Table with 8 columns: ID, Name, Year, Page, AK Number, Date, Author, and Publisher. It lists various publications and their details.

Համարել անվավեր:

Advertisement for 'LUSARAR' (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՄՆԱԳԻՐ «ԼՈՒՍԱՐԱՐ» ՓԲԸ). Includes contact information for the publisher and details about the journal's content and subscription information.